



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

**ՆԻԿՈԼՅԱՆՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ**

*(զանգապ թիվ 74438/14)*

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

3 հոկտեմբերի 2019թ.

*Սույն վճիռը վերջնական է դառնում Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված դեպքերում: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



**Նիկոլյանն ընդդեմ Հայաստանի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (Առաջին բաժանմունք),  
հանդես գալով Պալատի հետեյալ կազմով՝

Քսենյա Տուրկովիչ [Ksenija Turković]՝ *Նախագահ,*

Քրիշտոֆ Վոյտիչեկ [Krzysztof Wojtyczek],

Արմեն Հարությունյան [Armen Harutyunyan],

Պերե Պաստոր Վիլանովա [Pere Pastor Vilanova],

Պաուլին Կոսկելո [Pauliine Koskelo],

Յովան Իլևսկի [Jovan Ilievski],

Ռաֆաելե Սաբատո [Raffaele Sabato]՝ դատավորներ,

եւ Աբել Կամպոս [Abel Campos]՝ *Բաժանմունքի քարտուղար,*

2019 թվականի սեպտեմբերի 3-ին անցկացնելով դռնփակ  
խորհրդակցություն,

կայացրեց հետեյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը.

**ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ**

1. Սույն գործը հարուցվել է «Մարդու իրավունքների եւ հիմնարար  
ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի (Կոնվենցիա) 34-րդ  
հոդվածի համաձայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի  
պրն Գուրգեն Նիկոլյանի (դիմումատու) կողմից ընդդեմ Հայաստանի  
Հանրապետության՝ 2014 թվականի նոյեմբերի 13-ին Դատարան ներկայացված  
զանգատի (թիվ 74438/14) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացրել են Երեւանում գործող իրավաբաններ  
տկն Հ. Հարությունյանը եւ տկն Ա. Մելքոնյանը: Հայաստանի Հանրապետության

կառավարությունը (Կառավարություն) ներկայացրել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն Ե. Կիրակոսյանը:

3. Դիմումատուն, մասնավորապես, պնդել է, որ՝ 1) իր ամուսնալուծության եւ վտարման մասին հայցով որոշում կայացնելիս իրեն զրկել են դատարանի մատչելիությունից, 2) իրեն գործունակությունից զրկելու վերաբերյալ վարույթն արդարացի չի եղել եւ 3) իրեն գործունակությունից զրկելով՝ խախտվել է մասնավոր կյանքի իր իրավունքը:

4. 2016 թվականի նոյեմբերի 17-ին դիմումատուի՝ դատարանի մատչելիությունից զրկելու, մրցակցային դատավարության ենթադրյալ բացակայության եւ դիմումատուին գործունակությունից զրկելու վերաբերյալ բողոքներն ուղարկվել են Կառավարություն, իսկ գանգատը մնացած մասով հայտարարվել է անընդունելի՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 54-րդ կանոնի 3-րդ կետի:

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1939 թվականին եւ ապրում է Երեւանում:

**Ա. Դիմումատուի ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը եւ նրան գործունակությունից զրկելու վերաբերյալ վարույթը**

6. Դիմումատուն բնակարանում ապրել է իր 15 տարվա կնոջ, ինչպես նաեւ իրենց որդու եւ վերջինիս կնոջ ու երեխայի հետ:

7. 2012 թվականի ապրիլի 25-ին դիմումատուն վարույթ հարուցելու համար դիմել է Շենգավիթ վարչական շրջանի դատարան (վարչական շրջանի դատարան)՝ ցանկանալով ամուսնալուծվել իր կնոջից եւ վտարել նրան իր բնակարանից: Դիմումատուն նշել է, որ իրենց համատեղ բնակությունը դարձել է անտանելի, քանի որ վերջին 12 տարվա ընթացքում իրենց հարաբերություններում եղել են տարածայնություններ, ինչի պատճառով իրենք արդեն *de facto* (փաստացի) բաժանված են: Դիմումատուն պնդել է, որ խնդրո առարկա բնակարանն իրենց ընդհանուր սեփականությունը չէ, եւ օրենքով ինքը դրա միակ սեփականատերն է:

8. 2012 թվականի հուլիսի 4-ին դիմումատուի կինը Քաղաքացիական դատավարության օրենսգրքի (ՔԴՕ) 168-րդ հոդվածի հիման վրա դիմել է հատուկ վարույթ հարուցելու համար՝ պահանջելով դիմումատուին ճանաչել անգործունակ: Նա նշել է, որ դիմումատուն դարձել է անճանաչելի. նա անընդհատ վեճեր է սկսել, մեղադրել եւ սպառնացել է իրեն, ընտանիքի մյուս անդամներին եւ, առհասարակ, նրան շրջապատող մարդկանց: Նա վերջերս սպառնացել է վրեժ լուծել եւ բոլորին դուրս գցել փողոց: Նա սկզբում դիմել է ոստիկանություն՝ իրեն եւ մյուսներին այդ հասցեի հաշվառումից հանելու համար, իսկ այնուհետեւ ներկայացրել է ամուսնալուծության եւ իրեն վտարելու մասին հայց, ինչը նրա պնդմամբ, հոգեկան խանգարման նշաններ էին: Դիմումատուի կինը բացատրել է, որ ինքը չի ունեցել որեւէ այլ ընտրություն, քան դատարան դիմելը, որովհետեւ դիմումատուի վարքագիծը սպառնալիք էր ներկայացնում ամբողջ ընտանիքի համար, քանի որ նրա հաջորդ քայլը լինելու էր ընտանիքի մյուս անդամներին վտարելը, եւ անհրաժեշտ էր կանխել դա: Նրա դիմումին կից ներկայացվել է 2012 թվականի հունիսի 28-ով թվագրված՝ իրենց չորս հարեանների կողմից ստորագրված հայտարարություն, որի համաձայն՝ դիմումատուն վերջին մի քանի տարվա ընթացքում սկսել է իրեն տարօրինակ պահել՝ իրեն շրջապատող մարդկանց հետ անընդհատ վիճաբանություններ ունենալով եւ անհեթեթ մեղադրանքներ ուղղելով իր կնոջն ու ընտանիքի մյուս անդամներին: Հարեաններն ավելացրել են, որ իրենց կարծիքով դիմումատուն հոգեկան խանգարում ուներ:

9. Նույն օրը Վարչական շրջանի դատարանը կարգադրել է իրականացնել դիմումատուի զննությունը հոգեբուժական փորձագետների հանձնաժողովի կողմից՝ նրանցից պահանջելով պարզել, թե արդյոք դիմումատուն կարող էր հասկանալ իր գործողությունների նշանակությունը եւ ղեկավարել դրանք: Վարչական շրջանի դատարանն ավելացրել է, որ այդ զննությունն անհրաժեշտ էր, քանի որ դիմումատուի կնոջ կողմից ներկայացված ապացույցները կարող էին ոչ բավարար լինել՝ նրա դիմումը բավարարելու համար:

10. 2012 թվականի սեպտեմբերի 25-ին հոգեբուժական փորձագետների հանձնաժողովը դիմումատուին զննելուց եւ այլ ապացույցներ ուսումնասիրելուց հետո տվել է իր եզրակացությունը: Երկու էջից բաղկացած եզրակացության մեջ նախեառաջ ամփոփվել են նրա կնոջ, հարեանների եւ տեղամասային ոստիկանի հայտարարությունները, որոնց համաձայն՝ վերջին տարիներին դիմումատուն դարձել է կասկածամիտ, անհանդուրժող եւ կռվարար՝ անընդհատ վիճաբանություններ ունենալով իր կնոջ եւ իրեն շրջապատող այլ անձանց հետ, անհեթեթ մեղադրանքներ ուղղելով իր կնոջը, նրան ենթարկելով ֆիզիկական բռնության եւ մեղադրելով նրան անհավատարմության եւ իրեն խաբելու մեջ: Եզրակացության մեջ այնուհետեւ վերլուծվել է դիմումատուի հետ անցկացված հարցազրույցի ժամանակ նրա վարքագիծը: Հիմնվելով վերոնշյալի վրա՝ հանձնաժողովը եզրակացրել է, որ դիմումատուի մոտ առկա էր «զառանցական խանգարում»՝ հոգեկան հիվանդություն, որի ախտանիշները հասել էին այնպիսի աստիճանի, որի հետեւանքով դիմումատուն զրկվել էր իր գործողությունների նշանակությունը հասկանալու եւ դրանք ղեկավարելու ունակությունից:

11. 2012 թվականի նոյեմբերի 14-ին դիմումատուի որդին նույնպես դիմել է ՔԴՕ-ի 168-րդ հոդվածի համաձայն հատուկ վարույթ հարուցելու համար՝ պահանջելով դիմումատուին ճանաչել անգործունակ այն հիմքով, որ նրա մոտ առկա էր հոգեկան խանգարում եւ նա հատուկ խնամքի կարիք ուներ:

12. 2012 թվականի նոյեմբերի 22-ին Վարչական շրջանի դատարանը որոշել է կասեցնել ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթը՝ մինչեւ

երկու դիմումների վերաբերյալ վերջնական որոշում կայացնելը, որոնք դիմումատուի նկատմամբ հարուցվել էին նրա՝ ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը ներկայացնելուց հետո:

13. 2012 թվականի դեկտեմբերի 13-ին Վարչական շրջանի դատարանը դիմումատուի ներկայությամբ քննել է դիմումատուի կնոջ կողմից ներկայացված դիմումը եւ որոշել է մերժել այն՝ հաշվի առնելով դիմումատուի եւ նրա կնոջ միջեւ շահերի բախումը եւ գտնելով, որ 2012 թվականի սեպտեմբերի 25-ի փորձագիտական եզրակացությունն անհրաժեշտ էր, սակայն ոչ բավարար ապացույց էր՝ դիմումատուին գործունակությունից զրկելու համար: Վարչական շրջանի դատարանը եզրակացրել է, որ դիմումատուի կնոջ դիմումը չէր հետապնդում իրավաչափ նպատակ. ուստի այդպիսի հանգամանքներում դիմումատուին գործունակությունից զրկելը նրա համար կառաջացներ լուրջ եւ անդառնալի հետեւանքներ՝ նրան դարձնելով Կոնվենցիայի խախտման պոտենցիալ զոհ:

14. 2013 թվականի հունվարի 9-ին դիմումատուի կինը վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ վճռի դեմ:

15. 2013 թվականի փետրվարի 8-ին Վարչական շրջանի դատարանը՝ այլ կազմով, բավարարել է դիմումատուի որդու կողմից ներկայացված դիմումը եւ դիմումատուին ճանաչել է անգործունակ: Վարչական շրջանի դատարանը հիմնվել է 2012 թվականի սեպտեմբերի 25-ի հոգեբուժական փորձագիտական եզրակացության վրա եւ եզրակացրել է, որ դիմումատուն չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը եւ ղեկավարել դրանք: Դիմումատուն չի ծանուցվել իր որդու կողմից ներկայացված դիմումի եւ Վարչական շրջանի դատարանում նիստի մասին:

16. Այդ վճռի դեմ վերաքննիչ բողոք չի ներկայացվել, հետեւաբար 2013 թվականի մարտի 11-ին այն ուժի մեջ է մտել:

17. 2013 թվականի մարտի 20-ին տեղի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը դիմումատուի որդուն նշանակել է որպես նրա խնամակալ՝ հիմնվելով 2013 թվականի փետրվարի 8-ի վճռի վրա:

18. 2013 թվականի մարտի 28-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է 2012 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը եւ դիմումատուի կնոջ բողոքի հիման վրա գործն ուղարկել է նոր քննության: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը նշել է, որ այն ժամանակ, երբ Վարչական շրջանի դատարանը քննել է դիմումատուի կնոջ դիմումը, 2013 թվականի փետրվարի 8-ի՝ դիմումատուին անգործունակ ճանաչելու մասին վերջնական վճիռը գոյություն չի ունեցել: Հետեաբար նա իրենից անկախ պատճառներով չէր կարող Վարչական շրջանի դատարան ներկայացնել գործի լուծման համար առանցքային ապացույց համարվող այդ վճիռը: Վերաքննիչ քաղաքացիական դատարանը եզրակացրել է, որ միայն այդ պատճառաբանությունը բավարար էր՝ 2012 թվականի դեկտեմբերի 13-ի վճիռը բեկանելու համար:

19. 2013 թվականի մայիսի 31-ին դիմումատուն, տեղեկանալով 2013 թվականի փետրվարի 8-ի վճռի մասին, ներկայացրել է վերաքննիչ բողոք այն հիմքով, որ Վարչական շրջանի դատարանն իրեն անգործունակ է ճանաչել առանց դատական նիստի մասին իրեն ծանուցելու:

20. 2013 թվականի հուլիսի 11-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը բեկանել է 2013 թվականի փետրվարի 8-ի վճիռը եւ կարգադրել է իրականացնել նոր քննություն այն հիմքով, որ դիմումատուն չի ծանուցվել իր գործունակությանն առնչվող գործով դատական նիստի մասին:

21. 2013 թվականի օգոստոսի 30-ին Վարչական շրջանի դատարանը որոշել է դիմումատուին ներգրավել վարույթում՝ որպես երրորդ անձ:

22. 2013 թվականի հոկտեմբերի 3-ին Վարչական շրջանի դատարանը դիմումատուի ներկայությամբ անցկացրել է նախնական դատական նիստ եւ որոշել է միացնել դիմումատուի կնոջ ու որդու կողմից ներկայացված դիմումները եւ դրանք քննել միասին:



23. 2013 թվականի հոկտեմբերի 31-ին Վարչական շրջանի դատարանն անցկացրել է մեկ այլ նախնական դատական նիստ: Նիստի արձանագրության համաձայն՝ տեղի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի ներկայացուցիչ Ռ.Ս.-ն ներկայացրել է դիմումատուին, որը դատական նիստին ներկա չի գտնվել: Արձանագրությունից պարզ չէ՝ արդյոք այդ նիստի ընթացքում քննարկվել է որեւէ հարց, թե՛ ոչ:

24. 2013 թվականի նոյեմբերի 18-ին Վարչական շրջանի դատարանը դիմումատուի, նրա կնոջ եւ Ռ.Ս.-ի մասնակցությամբ անցկացրել է գործով դատաքննություն: Այն բանից հետո, երբ Ռ.Ս.-ն, հիմնվելով 2012 թվականի սեպտեմբերի 25-ի հոգեբուժական փորձագիտական եզրակացության վրա, հաստատել է դիմումատուի կնոջ եւ որդու կողմից ներկայացված դիմումները, նախագահող դատավորը հրավիրել է դիմումատուին՝ այդ կապակցությամբ իր դիրքորոշումը ներկայացնելու համար: Դիմումատուն հերքել է, որ ինքն ունի որեւէ լուրջ հոգեկան խանգարում եւ պնդել է, որ իր հոգեբուժական փորձաքննության գործընթացն իրականացվել է կաշառքի միջոցով: Նա նաեւ նշել է, որ կնոջ հետ իր հարաբերություններն անտանելի են եղել, քանի որ նա խաբել է իրեն եւ հաճախակի ծաղրել ուրիշների մոտ, ինչի պատճառով էլ ինքը ցանկացել է ամուսնալուծվել նրանից: Դիմումատուն նաեւ դատարանին կոչ է արել ընթերցել «Եվրոպական օրենքի 48-րդ հոդվածը» եւ «Հայաստանի օրենքի 32-րդ հոդվածը»: Նախագահող դատավորը դիմումատուի կնոջը խնդրել է բացատրել պատճառները, թե ինչու էր նա պահանջում դիմումատուին զրկել գործունակությունից: Դիմումատուի կինը նախեւառաջ հաստատել է, որ վերջին 12 տարվա ընթացքում իրենք ունեցել են կոնֆլիկտային հարաբերություններ, եւ դրա պատճառներից մեկն այն էր, որ դիմումատուն չափազանց խանդոտ եւ կասկածամիտ էր: Բացի այդ, նա նշել է, որ դիմումատուն սպառնացել է դանակով հարվածել ինքն իրեն: Նա բացատրել է, որ այն ժամանակ, երբ դիմումատուն ներկայացրել է ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը, ինքն անհրաժեշտ է համարել ներկայացնել դիմում՝ նրան անգործունակ ճանաչելու պահանջով:

25. 2013 թվականի նոյեմբերի 29-ին Վարչական շրջանի դատարանը դիմումատուի ներկայությամբ բավարարել է նրա կնոջ եւ որդու համատեղ դիմումը եւ Քաղաքացիական օրենսգրքի (ՔՕ) 31-րդ հոդվածի հիման վրա դիմումատուին ճանաչել է անգործունակ: Հիմնվելով 2012 թվականի սեպտեմբերի 25-ի հոգեբուժական փորձագիտական եզրակացության վրա՝ Վարչական շրջանի դատարանը վճռել է, որ հոգեկան խանգարման հետեանքով դիմումատուն չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը եւ ղեկավարել դրանք:

26. Դիմումատուն ներկայացրել է վերաքննիչ բողոք, որում նա պնդել է, որ չի հաստատվել այն հանգամանքը, որ ինքը չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը: Վարչական շրջանի դատարանի կողմից ՔՕ-ի 31-րդ հոդվածի մեկնաբանությամբ եւ կիրառմամբ անհիմն ձեռով սահմանափակվել է իր քաղաքացիական իրավունքների շրջանակը: Վիճելի էր այն հարցը, թե արդյոք նշված հիվանդությունը, մասնավորապես «գառանցական խանգարումը», իրեն փաստացի զրկել էր իր գործողությունների նշանակությունը հասկանալու ունակությունից, քանի որ վիճարկվող վճռում չէր նշվել որեւէ օրինակ կամ իրավիճակ, որում դրսեւորվել էր իր ենթադրյալ անգործունակությունը: Բացի այդ, Վարչական շրջանի դատարանը չի կարգադրել իր մտավոր առողջության նոր բժշկական գնահատում եւ հիմնվել է 2012 թվականի սեպտեմբերի 25-ի հին եզրակացության վրա: Հիմնվելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածի եւ Դատարանի՝ *Շտուկատուրովն ընդդեմ Ռուսաստանի* [*Shtukaturon v. Russia*] գործով վճռի (թիվ 44009/05, ՄԻԵԴ 2008) վրա՝ դիմումատուն պնդել է, որ ներպետական դատարանների կողմից իր հիվանդության աստիճանը մանրամասն չուսումնասիրելու հետեանքով խախտվել է իր մասնավոր կյանքի իրավունքը: Դիմումատուն նաեւ նշել է, որ դիմումատուի կնոջ՝ իրեն գործունակությունից զրկելու շարժառիթն իր բնակարանից իրեն զրկելն էր: Վերջում դիմումատուն արտահայտել է նաեւ իր անհամաձայնությունն իր՝ «երրորդ անձի» դատավարական կարգավիճակի հետ կապված, քանի որ նա չէր կարող իրեն գործունակությունից զրկելու վերաբերյալ գործով հանդես գալ զուտ որպես «երրորդ անձ»:

27. 2014 թվականի մարտի 7-ին Վերաքննիչ քաղաքացիական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը: Այն գտել է, որ 2012 թվականի սեպտեմբերի 25-ի հոգեբուժական փորձագիտական եզրակացությունը եղել է բավարար ապացույց՝ դիմումատուին անգործունակ ճանաչելու համար: Վերաքննիչ դատարանը նշել է, որ չկա որեւէ ապացույց՝ փորձագիտական եզրակացության մեջ արված եզրահանգումները հերքելու կամ ենթադրելու համար, որ դիմումատուն առողջացել է:

28. Դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք:

29. 2014 թվականի ապրիլի 10-ին դիմումատուն գրել է տեղի խնամակալության եւ հոգաբարձության մարմնին՝ խնդրելով, որ խնամակալ նշանակելիս հաշվի առնվի իր կարծիքը:

30. 2014 թվականի ապրիլի 30-ին Վճռաբեկ դատարանը դիմումատուի վճռաբեկ բողոքը ճանաչել է անընդունելի՝ հիմքերի բացակայության պատճառով:

31. 2014 թվականի հունիսի 19-ին դիմումատուի որդին դիմել է Վարչական շրջանի դատարան՝ հրաժարվելով դիմումատուի ամուսնալուծության եւ վտարման մասին հայցից այն հիմքով, որ դիմումատուն անգործունակ էր ճանաչվել: Նա նաեւ Վարչական շրջանի դատարանին տեղեկացրել է, որ տեղի խնամակալության եւ հոգաբարձության մարմնի 2013 թվականի մարտի 20-ի որոշմամբ ինքը նշանակվել է դիմումատուի խնամակալ:

32. 2014 թվականի օգոստոսի 14-ին Վարչական շրջանի դատարանը որոշել է վերսկսել ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթը:

33. 2014 թվականի սեպտեմբերի 16-ին խնամակալության եւ հոգաբարձության մարմինը հաստատել է իր 2013 թվականի մարտի 20-ի որոշումը՝ դիմումատուի որդուն նշանակելով որպես նրա խնամակալ՝ այս անգամ հիմնվելով 2013 թվականի նոյեմբերի 29-ի վճռի վրա:

34. 2014 թվականի հոկտեմբերի 1-ին Վարչական շրջանի դատարանը բավարարել է դիմումատուի որդու պահանջը եւ ավարտել է ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթն այն հիմքով, որ ներպետական օրենսդրությամբ խնամակալը լիազորված է անգործունակ ճանաչված անձի անունից հրաժարվել վերջինիս հայցից: Այն նաեւ նշել է, որ դիմումատուի որդին խնամակալ է նշանակվել դիմումատուի համաձայնությամբ եւ ցանկությամբ:

#### **Բ. Խնամակալության վիճարկումը**

35. 2015 թվականի փետրվարի 19-ին դիմումատուն դիմում է ներկայացրել Վարչական դատարան՝ պահանջելով բեկանել խնամակալության եւ հոգաբարձության մարմնի 2013 թվականի մարտի 20-ի որոշումը եւ նշանակել նոր խնամակալ:

36. 2015 թվականի փետրվարի 25-ին Վարչական դատարանն անընդունելի է ճանաչել դիմումատուի դիմումն այն հիմքով, որ դիմումատուն ճանաչվել է անգործունակ, ինչի հետեւանքով չի ունեցել այդպիսի հայց ներկայացնելու իրավունք:

37. Դիմումատուն վերաքննիչ բողոք է ներկայացրել այդ որոշման դեմ:

38. 2015 թվականի ապրիլի 16-ին Վերաքննիչ վարչական դատարանը մերժել է դիմումատուի վերաքննիչ բողոքը:

39. Դիմումատուն ներկայացրել է վճռաբեկ բողոք:

40. 2016 թվականի սեպտեմբերի 28-ին Վճռաբեկ դատարանը բավարարել է դիմումատուի վճռաբեկ բողոքը եւ բեկանել է Վերաքննիչ վարչական դատարանի որոշումը: Վճռաբեկ դատարանը դիմումատուի վճռաբեկ բողոքը քննության ընդունելու իր որոշումը պարզաբանել է այն հիմքով, որ անհրաժեշտ է եղել հստակեցնել այն հարցը, թե արդյոք անգործունակ ճանաչված անձն իրավունք ունի վիճարկելու իր խնամակալի նշանակման մասին որոշումը: Ինչ վերաբերում է

ըստ էության քննությանը, Վճռաբեկ դատարանը հաշվի է առել դիմումատուի՝ շահերի բախման եւ իր ու որդու միջեւ պարբերական բնույթ կրող վեճերի վերաբերյալ փաստարկները: Այն գտել է, որ չնայած ՔՕ-ի 37-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ խնամակալության եւ հոգաբարձության մարմնի՝ խնամակալ նշանակելիս դիմումատուի կարծիքը լսելու եւ նրա ցանկությունը հաշվի առնելու պարտականությանը, այն ըստ երեսույթին չի արել դա՝ չնայած այն հանգամանքին, որ դիմումատուն լսում է պահանջել: Այն եզրակացրել է, որ այդ հանգամանքներում, դիմումատուից պահանջելը, որ խնամակալի նշանակման առնչությամբ դատական պաշտպանությունը հայցի բացառապես իր խնամակալի միջոցով, գործնականում առնվազն ոչ արդյունավետ է եղել: Որպես անձ, որի համար իր խնամակալի նշանակման մասին որոշմամբ առաջանում են հետեւանքներ, դիմումատուն պետք է օգտված լիներ այդ որոշումը դատարանում վիճարկելու իրավունքից, քանի որ այդպես վարվելու անհնարիւնությունը կլիներ դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտում:

41. 2016 թվականի նոյեմբերի 14-ին Վերաքննիչ վարչական դատարանը բեկանել է Վարչական դատարանի 2015 թվականի փետրվարի 25-ի որոշումը եւ գործն ուղարկել նոր քննության:

42. Կողմերի միջեւ դիտարկումների վերջնական փոխանակման ժամանակ տվյալ վարույթը դեռ ընթանում էր Վարչական դատարանում, եւ դրա արդյունքն անհայտ է:

#### **Գ. Դիմումատուի՝ իր գործունակությունը վերականգնելու փորձերը**

43. 2014 թվականի մայիսի 23-ին դիմումատուն նոր հոգեբուժական զննության պահանջով նամակ է ուղարկել Առողջապահության նախարարին, որպեսզի որոշվեր, թե արդյոք նա կարող էր հասկանալ իր գործողությունների նշանակությունը եւ ղեկավարել դրանք, քանի որ 2012 թվականի սեպտեմբերի 25-ի միակ հոգեբուժական փորձագիտական եզրակացությունից անցել էր շուրջ երկու տարի:

44. 2014 թվականի հունիսի 2-ին Առողջապահության նախարարությունը պատասխանել է, որ այն այդպիսի զննություն նշանակելու որեւէ լիազորություն չունի:

45. 2014 թվականի օգոստոսի 22-ին դիմումատուն դիմել է հոգեբուժական հիվանդանոց՝ պահանջելով անցկացնել հոգեբուժական փորձաքննություն: Ըստ էության, հիվանդանոցը երբեւէ չի արձագանքել այս պահանջին:

46. Նույն օրը դիմումատուն դիմել է Վարչական շրջանի դատարան՝ նշելով, որ անհրաժեշտ է վերանայել իր առողջական վիճակը, քանի որ 2012 թվականի սեպտեմբերի 25-ի՝ իրեն անգործունակ ճանաչելու համար միակ հիմքը հանդիսացած հոգեբուժական փորձագիտական եզրակացությունից անցել է շուրջ երկու տարի, ինչպես նաեւ պահանջելով, որ դատարանը նշանակի նոր հոգեբուժական փորձաքննություն՝ որոշելու համար, թե արդյոք իր հոգեկան առողջությունը թույլ է տալիս հասկանալ իր գործողությունների նշանակությունը եւ ղեկավարել դրանք:

47. 2014 թվականի օգոստոսի 28-ին Վարչական շրջանի դատարանը դիմումատուին պատասխանել է, որ, համաձայն ՔԴՕ-ի 173-րդ հոդվածի 1-ին մասի, իրավասու է խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումով, դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության հիման վրա վճիռ կայացնել ապաքինվածին գործունակ ճանաչելու մասին: Այն չի ունեցել նոր հոգեբուժական փորձաքննություն պահանջելու լիազորություն՝ հաշվի առնելով 2013 թվականի նոյեմբերի 29-ի վերջնական վճիռը:

48. 2015 թվականի ապրիլի 7-ին Սահմանադրական դատարանը, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված դիմումի համաձայն, ՔԴՕ-ի 173-րդ հոդվածի 1-ին մասը ճանաչել է հակասահմանադրական այն մասով, որով իրենց գործունակության վերականգնումը պահանջող անձինք զրկվում են դատարանում լսելի լինելու եւ վարույթին մասնակցելու իրավունքից անձամբ օգտվելու հնարավորությունից:

49. 2015 թվականի մայիսի 11-ին դիմումատուն, իրավաբանների ներկայացմամբ, վարույթ հարուցելու համար դիմել է Վարչական շրջանի դատարան՝ պահանջելով իրեն ճանաչել գործունակ: Վարչական շրջանի դատարանն ընդունել է դիմումատուի դիմումը եւ նրան շնորհել որպես երրորդ անձ հանդես գալու դատավարական կարգավիճակ:

50. 2015 թվականի հունիսի 29-ին Վարչական շրջանի դատարանը կարգադրել է հոգեբուժական փորձագետների հանձնաժողովի կողմից դիմումատուի զննություն իրականացնել՝ որոշելու համար, թե արդյոք նա կարող է հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:

51. 2015 թվականի հոկտեմբերի 29-ին հանձնաժողովը եզրակացրել է, որ դիմումատուի մոտ կարող էր լինել «զառանցական խանգարում», «խանդի զառանցանք» եւ «թույլ արտահայտված՝ անձի տարիքային փոփոխություն»: Այն նշել է, որ անհրաժեշտ է ստացիոնար զննություն, քանի որ հնարավոր չէր կատարել դիմումատուի վիճակի ճշգրիտ ախտորոշում եւ պատասխանել Վարչական շրջանի դատարանի հարցերին:

52. Դիմումատուի իրավաբանն արտահիվանդանոցային հոգեբուժական զննություն անցկացնելու մասին պահանջ է ներկայացրել Վարչական շրջանի դատարան՝ պնդելով, որ ստացիոնար զննությունը բացասական ազդեցություն կունենա դիմումատուի հոգեկան եւ ֆիզիկական առողջության վրա:

53. 2016 թվականի օգոստոսի 1-ին Վարչական շրջանի դատարանը կարգադրել է դիմումատուի արտահիվանդանոցային զննություն եւ խնդրել է զննող հանձնաժողովին պատասխանել հետեւյալ հարցերին.

«[Դիմումատուն] տառապում է հոգեկան հիվանդությամբ, թե ոչ, կարող է հասկանալ իր գործողությունների նշանակությունը եւ ղեկավարել դրանք»:

54. 2016 թվականի դեկտեմբերի 6-ին հոգեբուժական փորձագետների հանձնաժողովը, զննելով դիմումատուին, ներկայացրել է հետեւյալ բովանդակությամբ իր զեկույցը.

«[Դիմումատուն] ունի հոգեկան խանգարում, այն է՝ «խառը ծագման մտավոր հետամնացություն», որն արտահայտվում է հիշողության եւ մտավոր ունակության լուրջ խանգարմամբ, մտքի, վերլուծության, ճանաչողության, խոսքի, ընկալման եւ վերարտադրման գործառույթների խանգարումներով: Վերոնշյալ [պայմանները] հասել են այն աստիճանի, որ [դիմումատուն] զրկվել է իր գործողությունների նշանակությունը հասկանալու եւ դրանք ղեկավարելու ունակությունից: Ուստի այսպիսի պայմաններում խորհուրդ է տրվում [դիմումատուին] զրկել գործունակությունից»:

55. Կողմերի միջեւ դիտարկումների փոխանակման ժամանակ վարույթը դեռ ընթանում էր ներպետական դատարաններում: Այդ վարույթի արդյունքն անհայտ է:

## II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

### Ա. Քաղաքացիական օրենսգիրք (1999)

56. 31-րդ հոդվածով նախատեսվում է, որ քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետեւանքով չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք, կարող է դատարանով անգործունակ ճանաչվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Անգործունակ ճանաչված քաղաքացու անունից գործարքներ է կնքում նրա խնամակալը: Եթե վերացել են այն հիմքերը, որոնց ուժով քաղաքացին անգործունակ է ճանաչվել, դատարանը նրան գործունակ է ճանաչում: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է նրա նկատմամբ սահմանված խնամակալությունը:

57. 32-րդ հոդվածով նախատեսվում է, որ ոգելից խմիչքների կամ թմրամիջոցների չարաշահման, ինչպես նաեւ մոլախաղերով հրապուրվելու հետեւանքով իր ընտանիքը նյութական ծանր դրության մեջ դրած քաղաքացու գործունակությունը կարող է դատարանով սահմանափակվել Հայաստանի



Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով: Նրա նկատմամբ սահմանվում է հոգաբարձություն:

58. 33-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ մասերով սահմանվում է, որ խնամակալությունը եւ հոգաբարձությունը սահմանվում են անգործունակ կամ սահմանափակ գործունակ քաղաքացիների իրավունքների եւ շահերի պաշտպանության համար: Խնամակալները եւ հոգաբարձուները, առանց հատուկ լիազորության, հանդես են գալիս իրենց խնամարկյալների իրավունքների ու շահերի պաշտպանությամբ ցանկացած անձանց հետ հարաբերություններում՝ ներառյալ դատարանում:

59. 37-րդ հոդվածի 1-ին եւ 3-րդ մասերով նախատեսվում է, որ խնամակալ նշանակում է [խնամակալության ու հոգաբարձության կարիք ունեցող անձի] բնակության վայրի խնամակալության եւ հոգաբարձության մարմինը: Խնամակալի նշանակումը շահագրգիռ անձանց կողմից կարող է բողոքարկվել դատարան: Խնամակալ նշանակելիս, ի թիվս այլնի, պետք է հաշվի առնվեն նրա ու խնամակալության կարիք ունեցող անձի միջեւ եղած հարաբերությունները, իսկ հնարավորության դեպքում՝ նաեւ խնամարկյալի ցանկությունը:

## **Բ. Քաղաքացիական դատավարության օրենսգիրք (1999-2018)**

### *1. Անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգը*

60. Օրենսգրքի 3-րդ բաժնի «Հատուկ վարույթներ» վերնագրով 2-րդ ենթաբաժինը ներառում է 29-րդ գլուխը (168-173-րդ հոդվածներ), որով կարգավորվում է անձին անգործունակ ճանաչելու ընթացակարգը:

61. 168-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը կարող է հարուցվել նրա ընտանիքի անդամների, խնամակալության եւ հոգաբարձության մարմնի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումի հիման վրա:

62. 169-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ դիմումի մեջ պետք է շարադրվեն այն հանգամանքները, որոնք վկայում են քաղաքացու հոգեկան խանգարման մասին, եւ որոնց հետեւանքով նա չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:

63. 170-րդ հոդվածով նախատեսվում է, որ քաղաքացու հոգեկան խանգարման վերաբերյալ հիմնավոր կասկածների առկայության դեպքում դատավորը, նրա հոգեկան վիճակը պարզելու համար, նշանակում է դատահոգեբուժական փորձաքննություն:

64. 171-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու վերաբերյալ գործը դատարանը քննում է խնամակալության եւ հոգաբարձության մարմնի ներկայացուցչի պարտադիր մասնակցությամբ: Քաղաքացին կարող է կանչվել դատական նիստի, եթե դա թույլ է տալիս նրա առողջական վիճակը:

65. 172-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ քաղաքացուն անգործունակ ճանաչելու մասին դատարանի վճռի հիման վրա խնամակալության եւ հոգաբարձության մարմինը նշանակում է խնամակալ:

66. 173-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված դեպքերում դատարանը խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության դիմումով, դատահոգեբուժական փորձաքննության համապատասխան եզրակացության հիման վրա, վճիռ է կայացնում ապաքինվածին գործունակ ճանաչելու մասին:

## 2. Այլ վերաբերելի դրույթներ

67. 27-րդ հոդվածով նախատեսվում է, որ գործին մասնակցող անձինք են՝ 1) կողմերը, 2) երրորդ անձինք, եւ 3) դիմողները՝ օրենսգրքի երրորդ բաժնով նախատեսված գործերով:

68. 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է, որ վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձինք օգտվում են կողմի իրավունքներից եւ կրում են նրա պարտականությունները, բացի հայցի հիմքը կամ առարկան փոխելու, հայցային պահանջների չափն ավելացնելու կամ նվազեցնելու, հայցից հրաժարվելու, հայցն ընդունելու կամ հաշտության համաձայնություն կնքելու եւ դատական ակտի հարկադիր կատարում պահանջելու իրավունքից:

69. 43-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսվում է, որ անգործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքները եւ օրինական շահերը դատարանում պաշտպանում են նրանց ծնողները (որդեգրողները), խնամակալները կամ հոգաբարձուները:

70. 105-րդ հոդվածով նախատեսվում է, որ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե, *inter alia*, անհնարին է տվյալ գործի քննությունը մինչեւ սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ գործով կամ հարցով որոշում կայացնելը, կամ եթե գործին մասնակցող քաղաքացին ճանաչվել է անգործունակ:

### III. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

#### Ա. Եվրոպայի խորհուրդ

71. 1999 թվականի փետրվարի 23-ին Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունել է «Չափահաս անգործունակ անձանց իրավական պաշտպանության վերաբերյալ սկզբունքների մասին» թիվ R(99) 4 հանձնարարականը: Հանձնարարականի համապատասխան մասերի համար տե՛ս *Ստանեն ընդդեմ Բուլղարիայի [Stanev v. Bulgaria]* ([ՄՊ], թիվ 36760/06, § 73, ՄԻԵԴ 2012) գործը: Այդ վճռում չհիշատակված համապատասխան մասերը շարադրված են հետեւյալ բովանդակությամբ.

**Սկզբունք 8. Շահագրգիռ անձի շահերի եւ բարեկեցության առաջնայնությունը**

«1. Չափահաս անգործունակ անձի համար պաշտպանության միջոց սահմանելիս կամ իրականացնելիս պետք է հնարավորինս ճշտվեն չափահաս անձի՝ անցյալում եւ ներկայում ունեցած ցանկություններն ու զգացմունքները, ինչպես նաեւ դրանք պետք է հաշվի առնվեն եւ արժանանան պատշաճ հարգանքի:

2. Այս սկզբունքը, մասնավորապես, ենթադրում է, որ չափահաս անձի՝ իրեն ներկայացնելու կամ աջակցելու համար ցանկացած անձի ընտրության հետ կապված ցանկությունը պետք է հաշվի առնվի եւ հնարավորինս արժանանա պատշաճ հարգանքի»:

**Սկզբունք 12. Ուսումնասիրությունը եւ գնահատումը**

«1. Պետք է գոյություն ունենան համապատասխան ընթացակարգեր՝ չափահաս անձի անձնական հնարավորություններն ուսումնասիրելու եւ գնահատելու համար:

2. Չպետք է նշանակվի անգործունակ չափահաս անձի գործունակությունը սահմանափակող պաշտպանության որեւէ միջոց, քանի դեռ [...] համապատասխան որակավորում ունեցող առնվազն մեկ փորձագետի կողմից չի ներկայացվել արդիական զեկույց»:

**Սկզբունք 16. Պատշաճ վերահսկողությունը**

«Պատշաճ վերահսկողություն պետք է իրականացվի պաշտպանության միջոցների կիրառման, ինչպես նաեւ ներկայացուցիչների գործողությունների եւ որոշումների նկատմամբ»:

72. Նույն օրը Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն ընդունել է թիվ R(99) 4 հանձնարարականի բացատրական հուշագիրը: 47-րդ պարբերության մեջ ներկայացվում է 8-րդ սկզբունքի հետեւյալ բացատրությունը.

«Այս սկզբունքը ենթադրում է, որ, ի թիվս այլնի, ցանկացած անձի՝ չափահաս անգործունակ անձին ներկայացնելու կամ աջակցելու ընտրությունը պետք է հիմնված լինի այդ անձի՝ չափահասի շահերը եւ բարեկեցությունը երաշխավորելու եւ խթանելու համար համապատասխանության վրա: Որոշ ընտանեկան իրավիճակներում առկա են շահերի բավականին սուր բխումներ, եւ մինչդեռ ընտանիքի անդամների անգնահատելի եւ անփոխարինելի դերը պետք է ամբողջությամբ ճանաչվի ու արժեւորվի, օրենքով պետք է կարգավորվեն նաեւ այն վտանգները, որոնք առկա են ընտանեկան տարածայնությունների որոշ իրավիճակներում»:

**Բ. Միավորված ազգերի կազմակերպություն**

73. 2006 թվականի դեկտեմբերին ընդունվել է Միավորված ազգերի կազմակերպության՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան (այսուհետ՝ ՀԱԻԿ): Միջազգային մակարդակում այն ուժի մեջ է մտել 2008 թվականի մայիսին: Մինչև 2016 թվականի սեպտեմբերի վերջ Եվրոպայի խորհրդի 47 անդամ պետություններից 44-ը վավերացրել են Կոնվենցիան: Հայաստանը Կոնվենցիան վավերացրել է 2010 թվականի սեպտեմբերի 22-ին: ՀԱԻԿ-ի՝ «Օրենքի առաջ հավասարությունը» վերնագրով 12-րդ հոդվածն ունի հետևյալ բովանդակությունը.

«1. Անդամ պետությունները վերահաստատում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ամենուր ունեն օրենքի առաջ հավասար ճանաչման իրավունք:

2. Անդամ պետությունները գիտակցում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունեն այլ անձանց հետ հավասար հիմունքներով իրավունակություն կյանքի բոլոր ոլորտներում:

3. Անդամ պետությունները ձեռնարկում են համապատասխան միջոցներ, որպեսզի հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի դարձնեն այն աջակցությունը, որը կարող է պահանջվել նրանց իրավունակությունը կիրառելիս:

4. Անդամ պետություններն ապահովում են, որ իրավունակության կիրառմանն ուղղված բոլոր միջոցներով չարաշահումները կանխելու համար ապահովվեն համապատասխան եւ արդյունավետ երաշխիքներ՝ մարդու իրավունքների միջազգային իրավունքին համապատասխան: Այդ երաշխիքներով ապահովվում է, որ իրավունակության կիրառմանն ուղղված միջոցներով հարգվեն անձի իրավունքները, կամքը եւ նախասիրությունները, դրանք զերծ լինեն շահերի բախումից եւ անհիմն ազդեցությունից, համահունչ եւ հարմարեցված լինեն անձի հետ կապված հանգամանքներին, կիրառվեն հնարավորինս սեղմ ժամկետներում եւ ենթարկվեն պարբերական վերահսկողության իրավասու, անկախ եւ անաչառ մարմնի կամ դատական մարմնի կողմից: Երաշխիքները պետք է համահունչ լինեն այն ազդեցության աստիճանին, որն այդ միջոցներն ունենում են անձի իրավունքների եւ շահերի վրա:

5. Սույն հոդվածի դրույթների համաձայն՝ անդամ պետությունները ձեռնարկում են բոլոր համապատասխան եւ անհրաժեշտ միջոցները, որպեսզի ապահովվեն

հաշմանդամություն ունեցող անձանց՝ իրենց սեփականությունը տնօրինելու կամ ժառանգելու, սեփական ֆինանսական գործարքները վերահսկելու եւ բանկային վարկերից, հիփոթեքային վարկից եւ ֆինանսական վարկավորման այլ միջոցներից օգտվելու հավասար իրավունքը, ինչպես նաեւ երաշխավորում են, որ հաշմանդամություն ունեցող անձինք կամայականորեն չզրկվեն իրենց սեփականությունից»:

## ԻՐԱՎՈՒՆՔԸ

### I. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

74. Դիմումատուն բողոքել է՝ ա) որ իրեն գործունակությունից զրկելուց հետո ներպետական դատարաններում չի ունեցել որեւէ դատավարական կարգավիճակ ինչպես իր ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը շարունակելու, այնպես էլ իր գործունակությունը վերականգնելու պահանջ ներկայացնելու համար, եւ բ) որ իրեն գործունակությունից զրկելու մասով վարույթի ընթացքում որեւէ արդար լսման չի մասնակցել, որով խախտվել են իր իրավունքները՝ երաշխավորված Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով, որը համապատասխան մասով շարադրված է հետեւյալ բովանդակությամբ.

«1. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են իր քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... տրիբունալի կողմից ... արդարացի ... լսումների իրավունք»:

### Ա. Դատարանի մատչելիությունը

#### 1. Ընդունելիությունը

75. Դատարանը նշում է, որ դիմումատուն բողոքել է հատկապես իրեն անգործունակ ճանաչելուց հետո դատարանի մատչելիության նկատմամբ երկու սահմանափակումների՝ նախ՝ իր ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը շարունակելու անհնարինության, եւ երկրորդ՝ իր գործունակությունը

վերականգնելու համար դատարան դիմելու հնարավորության բացակայության հետ կապված:

76. Կառավարությունը երկրորդ բողոքի առնչությամբ ներկայացրել է չսպառման հետ կապված առարկություն՝ պնդելով, որ այն վաղաժամ է, քանի որ Սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի որոշումից հետո դիմումատուին տրվել է դատարանի մատչելիության իրավունք՝ իր գործունակության վերականգնումը պահանջելու համար, եւ այդ վարույթը դեռ քննության փուլում է եղել:

77. Դիմումատուն նշել է, որ իր գործունակությունը վերականգնելու համար դատարանի մատչելիության բացակայության վերաբերյալ բողոքը վերաբերում է մինչեւ Սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի որոշման կայացումը եղած առկա իրավիճակին, հատկապես այն ժամանակահատվածին, երբ 2014 թվականի օգոստոսին ինքը փորձել է սկսել նոր բժշկական փորձաքննության եւ ներպետական դատարանի կողմից իր կարգավիճակի վերանայման գործընթաց, սակայն չի կարողացել, քանի որ ՔԴՕ-ի 173-րդ հոդվածի համաձայն՝ իր՝ դատարանի մատչելիության նկատմամբ սահմանափակում է նշանակվել: Սահմանադրական դատարանի որոշումից հետո իր կողմից նախաձեռնված վարույթն իսկապես քննության փուլում է եղել, սակայն Դատարան ներկայացված իր գանգատի մաս չի կազմել: Հետեւաբար նա դեռ կարող էր պնդել, որ 2014 թվականի օգոստոսին դատարանի մատչելիությունից զրկվելու առնչությամբ համարվում էր զրհ:

78. Դատարանը նշում է, որ դիմումատուի բողոքը վերաբերում է նախքան Սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի որոշումն իր գործունակությունը վերականգնելու պահանջ ներկայացնելու համար դատարանի մատչելիությունից օգտվելու հնարավորության բացակայությանը: Նրան իսկապես այդ որոշումից հետո տրվել է դատարանի մատչելիության իրավունք, սակայն նա չի բողոքում այդ վարույթի արդարացիության կամ այդ վեճի ըստ էության քննության հետ կապված: Հետեւաբար այն փաստը, որ այդ վարույթը դեռ

ընթանում է, որեւէ կապ չունի դիմումատուի՝ դատարանի մատչելիության հետ կապված բողոքի հետ, եւ որեւէ հարց չի առաջանում չսպառման կամ նրա բողոքը վաղաժամկետ լինելու հետ կապված: Հետեւաբար Դատարանը մերժում է այս մասով Կառավարության առարկությունը:

79. Մյուս կողմից, Դատարանը չի կարող անտեսել այն փաստը, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ դիմումատուին իր գործունակության վերականգնումը պահանջելու համար տրվել է դատարանի մատչելիության իրավունք, հարց է առաջանում, թե արդյոք դիմումատուն դեռ կարող է պնդել, որ ինքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի ենթադրյալ խախտման զոհ է: Այս առնչությամբ Դատարանը կրկին նշում է, որ դիմումատուի համար բարենպաստ ցանկացած որոշում կամ միջոց սկզբունքորեն բավարար չէ նրան «զոհի» կարգավիճակից զրկելու համար, եթե իշխանությունները հստակորեն կամ ըստ էության ընդունած չլինեն Կոնվենցիայի խախտումը եւ այնուհետեւ դրա համար հատուցում տրամադրած չլինեն (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Սկորդինոն ընդդեմ Իտալիայի (թիվ 1)* [ՄԴ] [*Scordino v. Italy (no. 1)*] [GC]], թիվ 36813/97, § 180, ՄԻԵԴ 2006-V):

80. Սույն գործում Դատարանը նշում է, որ ՔԴՕ-ի 173-րդ հոդվածի 1-ին կետում ներառված սահմանափակման հիմքով դիմումատուն չի ունեցել որեւէ դատավարական կարգավիճակ՝ իր գործունակությունը վերանայելու եւ վերականգնելու նպատակով դատական վարույթ հարուցելու պահանջ ներկայացնելու համար: Այս իրավիճակը փոխվել է, երբ 2015 թվականի ապրիլի 7-ին Սահմանադրական դատարանը 173-րդ հոդվածի 1-ին կետը ճանաչել է հակասահմանադրական եւ անվավեր այն մասով, որով չէր ապահովվում անգործունակ ճանաչված անձանց՝ դատական վարույթ հարուցելու համար անձամբ դիմելու իրավունքը՝ վերջ դնելով այն իրավիճակին, որի հետ կապված իր գանգատի մեջ բողոքում էր դիմումատուն, եւ նրան հնարավորություն տալով 2015 թվականի մայիսին դիմելու դատական վարույթ հարուցելու համար: Այնուամենայնիվ, ըստ Դատարանի տեսակետի՝ Սահմանադրական դատարանի



որոշումը, որն ըստ էության կայացվել էր Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված դիմումի հիման վրա եւ որեւէ ձեւով առնչություն չուներ դիմումատուի կոնկրետ գործի հետ, չի համարվում ինչպես դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի խախտման հստակ ընդունում, այնպես էլ իր իրավունքից զրկված լինելու ժամանակահատվածի համար դիմումատուին փոխհատուցման տրամադրում (տե՛ս, *mutatis mutandis* (համապատասխան փոփոխություններով) *Սենտրո Եվրոպա 7 Ս.Ն.Լ-ն եւ Դի Ստեֆանոն ընդդեմ Իտալիայի* [ՄՊ] [*Centro Europa 7 S.r.l. and Di Stefano v. Italy* [GC]], թիվ 38433/09, § 83, ՄԻԵԴ 2012):

81. Դատարանը հետեւաբար եզրակացնում է, որ դիմումատուն դեռեւս կարող է պնդել, որ ինքը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ դատարանի մատչելիության իրավունքի ենթադրյալ խախտման զոհ է:

82. Դատարանը նշում է, որ դիմումատուի՝ դատարանի մատչելիության բացակայության վերաբերյալ բողոքները, Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի իմաստով, ակնհայտ անհիմն չեն: Դատարանն այնուհետեւ նշում է, որ դրանք անընդունելի չեն որեւէ այլ հիմքով: Հետեւաբար դրանք պետք է հայտարարվեն ընդունելի:

## 2. Ըստ էության քննությունը

### ա) Կողմերի փաստարկները

#### i) Դիմումատուն

83. Դիմումատուն նշել է, որ իրեն անգործունակ ճանաչելուց հետո չի ունեցել որեւէ դատավարական կարգավիճակ ինչպես իր ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը շարունակելու, այնպես էլ իր գործունակությունը վերանայելու պահանջով դատարան դիմելու համար, ինչով խախտվել է

Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված՝ դատարանի մատչելիության իր իրավունքը:

84. Ինչ վերաբերում է ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթին, դիմումատուն նշել է, որ ինքն այդ վարույթը հարուցելու պահանջով դիմել է նախքան իրեն անգործունակ ճանաչելու համար իր կնոջ եւ որդու կողմից դատարան դիմելը: Նա պնդել է, որ նրանց գործողության միակ նպատակը եղել է ամուսնալուծության եւ վտարման գործընթացից խուսափելը, եւ իրեն անգործունակ ճանաչելուց հետո ինքն այլեւս հնարավորություն չի ունեցել իր ամուսնալուծության եւ վտարման գործն անձամբ ներկայացնելու դատարան կամ վարույթը կասեցվելուց հետո պահանջելու այդ հայցի քննությունը, քանի որ, ՔՕ-ի 31-րդ եւ 33-րդ հոդվածներին համապատասխան, ինքը դատարաններում կարող էր հանդես գալ միայն իր խնամակալի միջոցով: Հայցից, ի վերջո, հրաժարվել է ոչ թե ինքը, այլ իր որդին, որի հետ ինքը կոնֆլիկտային հարաբերությունների մեջ էր եւ պարբերաբար վիճում էր, եւ որը, այդպես վարվելով, գործել էր իր կամքին եւ շահերին հակառակ: Հետեւաբար հայցից հրաժարվելը չէր բխում իր լավագույն շահից, եւ դրա միակ նպատակն ամուսնալուծությունից եւ վտարման գործընթացից խուսափելն էր: Ուստի ինքը զրկվել էր ամուսնալուծության գործընթացը շարունակելու եւ մասնավոր կյանքի իր իրավունքը պաշտպանելու հնարավորությունից:

85. Ինչ վերաբերում է գործունակության վերականգնմանը, դիմումատուն նշել է, որ 2014 թվականի օգոստոսին նոր բժշկական փորձաքննություն նշանակելու պահանջով դիմել է դատարան, որպեսզի վերանայվի իրեն անգործունակ ճանաչելու մասին որոշումը: Դատարանը, սակայն, հրաժարվել է քննել այս պահանջը՝ հղում կատարելով ՔԴՕ-ի 173-րդ հոդվածին, որով սահմանափակված էր իր գործունակության վերականգնումը պահանջելու համար դատարանի մատչելիությունը: Ավելին, Հայաստանի համակարգով նախատեսված չէր ողջամիտ ժամանակահատվածում անգործունակության հարցը վերանայելու որեւէ հնարավորություն: Հղում կատարելով *Սլրանեի* (վերելում հիշատակված) եւ

*Նատալյա Միխայլենկոն ընդդեմ Ուկրաինայի [Nataliya Mikhaylenko v. Ukraine]* (թիվ 49069/11, 2013 թվականի մայիսի 30) գործերով վճիռներին՝ դիմումատուն պնդել է, որ իր գործունակության վերականգնումը պահանջելու համար ինքը պետք է օգտվեր դատարանի մատչելիության իրավունքից, ինչը խախտվել է իր 2014 թվականի պահանջի քննումը մերժելու հետեանքով: Դատական վերանայում չիրականացնելու այդ փաստը լուրջ ազդեցություն է ունեցել իր կյանքի տարբեր ոլորտների վրա եւ որեւէ իրավաչափ նպատակ չի հետապնդել:

*ii) Կառավարությունը*

86. Կառավարությունը հերքել է, որ խախտվել է դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքը:

87. Ինչ վերաբերում է ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթին, Կառավարությունը նշել է, որ այն ժամանակ, երբ դատարանը որոշել է կասեցնել այդ վարույթը, դիմումատուին առնչվող հոգեբուժական փորձագիտական եզրակացությունն արդեն տրված է եղել, եւ ներպետական դատարանն օրենքով պարտավոր է եղել կասեցնել այդ վարույթը, քանի որ դիմումատուի գործունակության հարցի պարզումը որոշիչ է եղել ամուսնալուծության եւ վտարման մասին հայցի քննության համար՝ դիմումատուի՝ իր գործողությունների նշանակությունը հասկանալու եւ դրանք ղեկավարելու ունակությունը գնահատելու մասով: Դիմումատուին գործունակությունից զրկելուց հետո նրա որդին հրաժարվել է նրա ամուսնալուծության եւ վտարման մասին հայցից, որը նշանակվել էր նրա խնամակալ՝ ներպետական օրենսդրության պահանջներին համապատասխան եւ դիմումատուի ցանկությամբ: Հայցից հրաժարվելն իրավաչափ նպատակ է հետապնդել, քանի որ դիմումատուի որդին որպես նրա խնամակալ պարտավորված էր դիմումատուին հետ պահել այնպիսի գործողություններ կատարելուց, որոնք մյուսների համար կարող էին հանգեցնել ծանր հետեանքների: Ավելին, ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթն

ավարտելու մասին որոշումն ազդեցություն չի ունեցել դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի վրա, քանի որ դիմումատուն ունեցել է իր հայցը կրկին ներկայացնելու հնարավորություն, եթե նրան հաջողվեր վերականգնել իր գործունակությունը, կամ եթե նշանակվեր նոր խնամակալ, կամ նրա որդին այդպիսի ցանկություն ունենար:

88. Ինչ վերաբերում է գործունակության վերականգնմանը, Կառավարությունը, անդրադառնալով Սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի որոշումից հետո դիմումատուի կողմից նախաձեռնված վարույթին, պնդել է, որ դիմումատուն այդ վարույթի շրջանակներում լիարժեք օգտվել է դատարանի մատչելիությունից: Նա կարողացել է լիարժեք օգտվել վարույթի կողմի բոլոր իրավունքներից՝ ներառյալ ներկա գտնվելու, իրավաբան ունենալու եւ պահանջներ ներկայացնելու իրավունքները: Ինչ վերաբերում է 2014 թվականի օգոստոսին ներկայացված պահանջին, Վարչական շրջանի դատարանը չի ունեցել նոր բժշկական փորձաքննություն նշանակելու լիազորություն՝ պայմանավորված այն փաստով, որ դիմումատուի գործունակության վերաբերյալ գործն արդեն ավարտվել էր վերջնական վճռով: Ամեն դեպքում, տվյալ պահանջը չի համարվել դատարան ներկայացված պատշաճ դիմում, եւ դատարանի մատչելիության բացակայության մասով բողոք ներկայացնելու համար դիմումատուն առնվազն պետք է փորձեր նախեսառաջ ներկայացնել այդպիսի դիմում:

## **բ) Դատարանի գնահատականը**

### *ի) Ընդհանուր սկզբունքները*

89. Դատարանը կրկին նշում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետով յուրաքանչյուրի համար ապահովվում է իր քաղաքացիական իրավունքներին եւ պարտականություններին առնչվող ցանկացած պահանջ դատարան կամ տրիբունալ ներկայացնելու իրավունքը: Այս «դատարանի իրավունքից», որի

ասպեկտներից է մատչելիության իրավունքը, կարող է օգտվել ցանկացած անձ, որը փաստարկելի հիմքերով համարում է, որ իր քաղաքացիական իրավունքներին միջամտությունն անօրինական է, եւ բողոքում է, որ չի տրվել այդ պահանջը դատարան ներկայացնելու որեւէ հնարավորություն՝ բավարարելով 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջները (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ստանեի* գործը, § 229, եւ վերելում հիշատակված՝ *Նախայլա Միխայլենկոյի* գործը, § 30):

90. Դատարանների մատչելիության իրավունքը բացարձակ չէ, այլ կարող է ենթակա լինել սահմանափակումների. դրանք թույլատրվում են անուղղակի ձեով, քանի որ մատչելիության իրավունքը «իր բուն էությամբ պահանջում է պետության կողմից կարգավորում. կարգավորում, որը կարող է տարբեր լինել ըստ ժամանակի եւ տեղի՝ համայնքի եւ անհատների կարիքներին ու ռեսուրսներին համապատասխան»: Նման կարգավորում սահմանելու հարցում Պայմանավորվող պետություններն ունեն հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Թեեւ Կոնվենցիայի պահանջների պահպանման մասով վերջնական որոշումը Դատարանին է, ազգային իշխանությունների գնահատումն այն մասով, թե այս ոլորտում ինչը կարող է լինել լավագույն քաղաքականություն, ցանկացած այլ գնահատմամբ փոխարինելը Դատարանի գործառույթի որեւէ մաս չի կազմում: Այնուամենայնիվ, կիրառվող սահմանափակումները չպետք է սահմանափակեն անհատին տրամադրված՝ դատարանի մատչելիության իրավունքն այնպես կամ այն չափով, որ խախտվի այդ իրավունքի բուն էությունը: Ավելին, որեւէ սահմանափակում համատեղելի չի լինի 6-րդ հոդվածի 1-ին կետի հետ, եթե այն չի հետապնդում իրավաչափ նպատակ, եւ եթե գործադրվող միջոցների ու հետապնդվող նպատակի միջեւ չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ստանեի* գործը, § 230 եւ վերելում հիշատակված՝ *Նախայլա Միխայլենկոյի* գործը, § 31):

91. Նախկինում Դատարանն ընդունել է, որ գործունակությունից զրկված անձի դատավարական իրավունքների նկատմամբ սահմանափակումները կարող են արդարացված լինել տվյալ անձի անձնական պաշտպանության, մյուսների շահերի

պաշտպանության եւ արդարադատության պատշաճ իրականացման տեսանկյունից (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ստանեի* գործը, § 241): Պետությունը պետք է որոշի, թե ինչպես ներպետական մակարդակում պետք է ապահովվեն գործունակությունից զրկված անձի դատավարական իրավունքները: Այս համատեքստում պետությունները վերոնշյալ նպատակներին հասնելու համար պետք է կարողանան ձեռնարկել սահմանափակող միջոցներ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Նախայլա Միխայլենկոյի* գործը, § 36):

*ii) Վերոնշյալ սկզբունքների կիրառումը սույն գործով*

92. Դատարանն ի սկզբանե նշում է, որ սույն գործում կողմերից որեւէ մեկը չի վիճարկել տվյալ վարույթում 6-րդ հոդվածի կիրառելիության հարցը, եւ Դատարանն այլ որոշում կայացնելու որեւէ պատճառ չունի (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ստանեի* գործը, § 233 եւ վերելում հիշատակված՝ *Նախայլա Միխայլենկոյի* գործը, § 33, որոնք, մասնավորապես, վերաբերում են գործունակության վերականգնման հարցով վարույթին): Դատարանը դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ սահմանափակումների երկու դեպքերին կանդիդատնա առանձին:

*α) Դատարանի մատչելիությունն ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթում*

93. Դատարանը նշում է, որ դիմումատուի՝ 2012 թվականի ապրիլի 25-ին ներկայացված ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը երբեք չի քննվել ներպետական դատարանների կողմից՝ նրան անգործունակ ճանաչելու մասին որոշման եւ որպես խնամակալ հանդես եկող նրա որդու կողմից հայցից վերջնականապես հրաժարվելու պատճառով: Այս առնչությամբ Դատարանը կրկին նշում է, որ դատարանի մատչելիության իրավունքը ներառում է ոչ միայն վարույթ հարուցելու իրավունքը, այլ նաեւ դատարանի կողմից վեճի լուծում

ստանալու իրավունքը (տե՛ս, ի թիվս այլ վճիռների, *Լուպենի Հույն Կաթոլիկ Ծխականը եւ այլք ընդդեմ Ռումինիայի* [ՄՊ] [*Lupeni Greek Catholic Parish and Others v. Romania* [GC]], թիվ 76943/11, § 86, 2016 թվականի նոյեմբերի 29):

94. Դատարանը նկատում է, որ անգործունակ ճանաչվելուց հետո դիմումատուն չի ունեցել դատարանում հանդես գալու որեւէ [դատավարական] գործունակություն՝ իր ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը շարունակելու համար, եւ համաձայն ՔԴՕ-ի 43-րդ հոդվածի 1-ին մասի եւ ՔՕ-ի 33-րդ հոդվածի 2-րդ մասի՝ կարող էր դա անել միայն իր խնամակալի միջոցով: Ուստի ներպետական օրենսդրությամբ անվերապահ արգելք էր դրվել կյանքի բոլոր ոլորտներում դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի նկատմամբ: Ավելին, ինչպես Կոնվենցիայի 8-րդ հոդվածի համաձայն կներկայացվի ներքեում, ներպետական իրավական համակարգով չեն տարբերակվել հոգեկան խանգարում ունեցող անձանց անգործունակության տարբեր աստիճաններ, եւ չեն նախատեսվել տվյալ անձի անհատական կարիքներին համապատասխանեցված պաշտպանության միջոցներ: Ուստի երբեւէ անդրադարձ չի կատարվել եւ պատասխաններ չեն տրվել այնպիսի հարցերին, թե արդյոք դիմումատուն կարող էր հասկանալ ամուսնալուծության կամ վտարման նշանակությունը եւ արդյոք կյանքի այդ ոլորտում նա կարող էր գործել ինքնուրույն, այդ թվում՝ դատարանում իր իրավունքները պաշտպանել՝ առանց խոչընդոտելու արդարադատության պատշաճ իրականացումը կամ վնասելու իրեն կամ այլոց: Հետեւաբար խնդրահարույց է այն, թե արդյոք դիմումատուի՝ դատարանի մատչելիության նկատմամբ այդ անվերապահ արգելքը, որի արդյունքում նրա համար առաջացել է իր ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը շարունակելու անհնարինություն, հետապնդել է որեւէ իրավաչափ նպատակ: Դատարանը, այնուամենայնիվ, անհրաժեշտ չի գտնում այդ հարցին վերջնականապես պատասխանել, քանի որ, նույնիսկ ենթադրելով, որ դա այդպես է եղել, դիմումատուի՝ դատարանի մատչելիության սահմանափակումն ամեն դեպքում արդարացված չի եղել գործի կոնկրետ հանգամանքներում հետեւյալ պատճառներով:

95. Դատարանը նշում է, որ ՔՕ-ի 37-րդ հոդվածի 3-րդ մասով պահանջվել է, որ խնամակալության եւ հոգաբարձության մարմինը, որը պատասխանատու է դիմումատուի խնամակալ նշանակելու համար, հաշվի առնի դիմումատուի ու նրա պոտենցիալ խնամակալի միջեւ հարաբերությունների բնույթը, իսկ հնարավորության դեպքում՝ դիմումատուի ցանկությունը: Ավելին, դիմումատուն հենց ինքն է դիմել այդ մարմին եւ խնդրել, որ իր խնամակալին նշանակելիս հաշվի առնվի իր կարծիքը (տե՛ս վերելում՝ 29-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, ինչպես հետեւում է Վճռաբեկ դատարանի 2016 թվականի սեպտեմբերի 28-ի որոշումից, խնամակալության եւ հոգաբարձության մարմինը չի լսել դիմումատուին եւ որպես նրա խնամակալ նշանակել է նրա որդուն՝ չնայած այն փաստին, որ դիմումատուն ըստ երեւույթին կոնֆլիկտային հարաբերությունների մեջ էր իր որդու հետ եւ դեմ էր նրա նշանակմանը: Այս առնչությամբ Դատարանն ընդգծում է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի թիվ R(99) 4 հանձնարարականի 8-րդ սկզբունքը հարգելու կարեւորությունը (տե՛ս վերելում՝ 71-րդ պարբերությունը): Այն նաեւ անդրադառնում է ՀԱԻԿ-ի 12-րդ հոդվածի 4-րդ մասին, որով պահանջվում են համապատասխան եւ արդյունավետ երաշխիքներ, որոնցով կապահովվի, որ հաշմանդամություն ունեցող անձանց կողմից իրավունակության կիրառմանն ուղղված միջոցները գերծ լինեն շահերի բախումից եւ անհիմն ազդեցությունից (տե՛ս վերելում՝ 73-րդ պարբերությունը), եւ որոնք Հայաստանը պարտավորվել է հաշվի առնել՝ միանալով ՀԱԻԿ-ին (տե՛ս *Գուբերինան ընդդեմ Խորվաթիայի [Guberina v. Croatia]*, թիվ 23682/13, § 92, 2016 թվականի մարտի 22): Սույն գործում այդ սկզբունքները հատուկ կարեւորություն են ունեցել դիմումատուի համար, քանի որ ամբողջությամբ գործունակությունից եւ դրա հետեւանքով նաեւ իր՝ դատարանի մատչելիության իրավունքից զրկված լինելով, դատարաններում իր իրավական շահերը պաշտպանելու միակ պատշաճ եւ արդյունավետ միջոցը կլինեւր կոնֆլիկտներից գերծ խնամակալությունը:



96. Այնուհետև Դատարանը նշում է, որ, գործի հանգամանքներից ելնելով, կասկածելի է այն փաստը, թե արդյոք դիմումատուի որդին իսկապես չեզոք դիրքում է եղել, եւ չի եղել շահերի բախում, մասնավորապես՝ դիմումատուի կողմից իր կնոջից ամուսնալուծվելու եւ նրան վտարելու պահանջով նրա դեմ ներկայացված հայցի առնչությամբ: Այս առնչությամբ Դատարանը նկատում է, որ Վարչական շրջանի դատարանը որեւէ ձեռով չի ուսումնասիրել այն հարցը, թե արդյոք դիմումատուի որդու՝ հայցից հրաժարվելու մասով պահանջը բխել է դիմումատուի լավագույն շահից, ինչպես նաեւ չի ներկայացրել այդ պահանջն ընդունելու մասին իր որոշման որեւէ բացատրություն (տե՛ս վերելում՝ 31-րդ եւ 34-րդ պարբերությունները): Հստակ չէ, թե ինչ հիմքով է Վարչական շրջանի դատարանը նշել, որ դիմումատուի որդին դիմումատուի խնամակալ է նշանակվել նրա համաձայնությամբ եւ ցանկությամբ. եզրահանգում, որն, ինչպես արդեն նշվել է վերելում, հետագայում հերքվել է Վճռաբեկ դատարանի կողմից: Հետեւաբար Դատարանը համարում է, որ ներպետական դատարանը դիմումատուի հայցից հրաժարվելու մասով պահանջն ընդունելու հարցում որոշում կայացնելիս չի իրականացրել անհրաժեշտ ուսումնասիրություն ու վերահսկողություն, եւ հետեւաբար ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթն ավարտելը հիմնավորված չէր:

97. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթով դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի առնչությամբ:

*β) Դատարանի մատչելիությունը՝ գործունակության վերականգնման մասով*

98. Դատարանն ի սկզբանե նշում է, որ դիմումատուի՝ իր գործունակության վերականգնման մասով դատարանի մատչելիության բացակայության վերաբերյալ բողոքն առնչվում է միայն մինչեւ Սահմանադրական դատարանի

2015 թվականի ապրիլի 7-ի որոշումն ընկած ժամանակահատվածին, երբ դիմումատուն, ՔԴՕ-ի 173-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով, չի ունեցել որեւէ *locus standi* (իրավասություն)՝ գործունակության վերականգնման համար ուղղակիորեն դատարան դիմելու համար, եւ դա կարող էր անել միայն այդ հոդվածում թվարկված անձանց, այդ թվում՝ խնամակալի, ընտանիքի անդամի կամ հոգեբուժական հաստատության տնօրինության միջոցով: Ավելին, ինչպես արդեն նշվել է վերելում, ներպետական օրենսդրության համաձայն՝ անգործունակ ճանաչված անձը դատարաններում կարող էր հանդես գալ միայն իր խնամակալի միջոցով:

99. Դատարանն արդեն համանման իրավիճակ քննել է վերելում հիշատակված *Ստանեի* եւ *Նախայյա Միխայլենկոյի* գործերում, որոնցում այն նշել է, որ դատավարական իրավունքների իրականացման կարելիությունը կարող է տարբերվել ըստ այն գործողության նպատակի, որը տվյալ անձը ցանկանում է ներկայացնել դատարաններում: Մասնավորապես, անգործունակ ճանաչելու հարցը վերանայելու խնդրանքով դատարան դիմելու իրավունքը եղել է տվյալ անձի ամենակարեւոր իրավունքներից մեկը, քանի որ մեկ անգամ սկսված այդ ընթացակարգը որոշիչ կլիներ այն բոլոր իրավունքների եւ ազատությունների իրականացման համար, որոնց վրա ազդեցություն է ունեցել անգործունակ ճանաչելու փաստը (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ստանեի* գործը, § 241 եւ վերելում հիշատակված՝ *Նախայյա Միխայլենկոյի* գործը, § 37): Հետեւաբար այդ իրավունքն այն անձանց պաշտպանության հիմնարար դատավարական իրավունքներից մեկն էր, որոնք մասնակիորեն կամ ամբողջությամբ զրկվել էին գործունակությունից: Ուստի նման անձինք այս ոլորտում սկզբունքորեն պետք է օգտվեն դատարանի ուղղակի մատչելիությունից (տե՛ս վերելում հիշատակված՝ *Ստանեի* գործը, § 241 եւ վերելում հիշատակված՝ *Նախայյա Միխայլենկոյի* գործը, §§ 38-40):

100. Այնուհետեւ Դատարանը վճռել է, որ պետությունը շարունակում է ազատ լինել այն ընթացակարգը որոշելու հարցում, որով պետք է իրագործվի այդ

ուղղակի մատչելիությունը: Միեւնույն ժամանակ 6-րդ հոդվածին անհամապատասխանություն չէր համարվի, եթե ազգային օրենսդրությամբ այս ոլորտում դատարանի մատչելիության նկատմամբ որոշ սահմանափակումներ նախատեսվեին, որոնց միակ նպատակը կլիներ ապահովումը, որ դատարանները չծանրաբեռնվեն չափազանցված եւ ակնհայտ անհիմն դիմումներով: Այդուհանդերձ, կարծես թե պարզ է, որ այս խնդիրը կարող է լուծվել այլ, պակաս սահմանափակող միջոցներով, քան ուղղակի մատչելիության ինքնաբերաբար մերժումն է, օրինակ՝ սահմանափակելով այն հաճախականությունը, որով կարող են ներկայացվել դիմումները, կամ ներդնելով գործի նյութերի հիման վրա դրանց ընդունելիության մասով նախնական քննության համակարգ (տե՛ս վերելում հիշատակված՝ *Սրանելի* գործը, § 242):

101. Ինչ վերաբերում է տվյալ ժամանակահատվածում Հայաստանում առկա իրավիճակին, անգործունակ ճանաչված անձանց կողմից դատարանի ուղղակի մատչելիությունից օգտվելու նկատմամբ ընդհանուր արգելքով որեւէ հնարավորություն չի թողնվել բացառության համար: Միեւնույն ժամանակ ներպետական օրենսդրությամբ չեն նախատեսվել երաշխիքներ այն մասով, որ գործունակության վերականգնման հարցը ողջամիտ ժամանակահատվածում պետք է վերանայվի՝ չնայած ՀԱԻԿ-ի 12-րդ հոդվածի 4-րդ մասի այն պահանջին, որ գործունակությունը սահմանափակող միջոցները պետք է իրավասու մարմնի կողմից ենթակա լինեն պարբերական բնույթ կրող վերանայման (տե՛ս վերելում՝ 73-րդ պարբերությունը): Դատարանը նաեւ նշում է, որ դատարանի ուղղակի մատչելիության նկատմամբ նման անվերապահ արգելքը չի համապատասխանել եվրոպական մակարդակում ընդհանուր միտումներին: Մասնավորապես, *Սրանելի* գործով իրականացված համեմատական վերլուծությունները ցույց են տվել, որ ուսումնասիրված քսան ազգային իրավական համակարգերից տասնյոթով տվյալ ժամանակահատվածում նախատեսվել է դատարանների ուղղակի մատչելիություն այն անձանց համար, որոնք ամբողջությամբ անգործունակ են ճանաչվել (տե՛ս վերելում հիշատակված՝ *Սրանելի* գործը,

§§ 88-90 եւ 243): Դիմումատուի գործում այս իրավիճակն ավելի է խորացել այն փաստով, որ իշխանությունները չեն ապահովել կոնֆլիկտներից զերծ խնամակալություն (տե՛ս վերելում՝ 95-րդ պարբերությունը): Վերջապես Դատարանը ոչ վերաբերելի է համարում այն հարցը, թե արդյոք դիմումատուի կողմից 2014 թվականի օգոստոսին ներկայացված պահանջը կարող էր համարվել «դատարան ներկայացված պատշաճ դիմում», թե՛ ոչ, քանի որ, նույնիսկ ենթադրելով, որ այն այդպիսին չէր, դիմումատուի՝ դատարանի մատչելիության նկատմամբ արգելքն ամրագրված էր օրենքով, եւ դիմումատուն չէր կարող պատասխանատվություն կրել այն բանի համար, որ չէր փորձել սկսել այնպիսի ընթացակարգ, որն սկսելու իրավունքը նա օրենքով չուներ:

102. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը համարում է, որ տվյալ ժամանակահատվածում դիմումատուի համար իր գործունակության վերականգնման պահանջով դիմելու անհնարինությունն անհամաչափ էր հետապնդվող ցանկացած իրավաչափ նպատակի:

103. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմումատուի՝ իր գործունակության վերականգնումը պահանջելու համար դատարանի մատչելիության բացակայության առնչությամբ:

#### **Բ. Դիմումատուին գործունակությունից զրկելու վերաբերյալ վարույթը**

104. Դատարանն ի սկզբանե նկատում է, որ դիմումատուի՝ ոչ արդար դատաքննության վերաբերյալ պնդումների մասով առկա է երկու հստակ փաստարկ. նախեւառաջ այն, որ ինքը չի լսվել դատարանի կողմից, եւ երկրորդ՝ ներպետական դատարաններն իրենց որոշումներում հիմնվել են հին հոգեբուժական փորձագիտական եզրակացության վրա: Ինչ վերաբերում է երկրորդ փաստարկին, Դատարանը համարում է, որ այն պետք է ուսումնասիրվի Կոնվենցիայի 8-րդ հոդվածի շրջանակներում (տե՛ս ներքեւում՝ 124-րդ պարբերությունը):

### 1. Կողմերի փաստարկները

105. Դիմումատուն նշել է, որ դատական քննությունը չի եղել արդար, քանի որ գործը քննվել է «հատուկ վարույթի» միջոցով, որը չի ենթադրում վեճի եւ վիճող կողմերի առկայություն, եւ հետեւաբար չի եղել մրցակցային: Չնայած ինքը ներկա է գտնվել 2013 թվականի հոկտեմբերի 3-ի եւ նոյեմբերի 18-ի դատական նիստերին, իր ներկայությունը միայն ձեական բնույթ է կրել, եւ չի հարգվել իր՝ լսելի լինելու իրավունքը: Վարույթի հատուկ բնույթի պատճառով իրեն չի թույլատրվել վիճարկել իր գործը, իր կնոջ եւ որդու դիմումների վերաբերյալ փաստարկներ ներկայացնել եւ վիճարկել փորձագիտական եզրակացությունը, իսկ դատավորն իրեն չի տվել որեւէ հարց կամ չի հետաքրքրվել իր դիրքորոշմամբ, քանի որ ինքը համարվել է միայն քննության առարկա եւ ոչ թե շահագրգիռ կողմ: 2013 թվականի նոյեմբերի 29-ի վճիռն ընդունվել է մի քանի բողոք տեսած դատական նիստից հետո, որի ընթացքում դատարանը միայն բարձրաձայն կարդացել է հոգեբուժական փորձագիտական եզրակացության արդյունքները եւ կայացրել է իր որոշումը: Հետեւաբար իրեն զրկել են վարույթին արդյունավետորեն մասնակցելու հնարավորությունից:

106. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն մրցակցային դատավարության բացակայության վերաբերյալ իր բողոքի մասով կորցրել է զոհի կարգավիճակը: Մասնավորապես, չնայած նրան ի սկզբանե չի թույլատրվել մասնակցել այն դատական նիստին, որի ընթացքում որոշվել է իր գործունակության հարցը, այդ վճիռը հենց այդ հիմքով բեկանվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից՝ այդպիսով շտկելով նախնական դատական քննության թերությունները եւ ապահովելով դիմումատուի իրավունքների պաշտպանությունը: Այդ որոշումից հետո դիմումատուին տրվել է երրորդ անձի կարգավիճակ, եւ նա մասնակցել է վարույթին, որի ընթացքում օգտվել է ՔԴՕ-ի 35-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ վարույթի կողմի գրեթե բոլոր դատավարական իրավունքներից եւ իրականացրել դրանք: Նա ներկա է գտնվել 2013 թվականի հոկտեմբերի 3-ի եւ նոյեմբերի 18-ի դատական

նիստերին, սակայն չի ներկայացել 2013 թվականի հոկտեմբերի 31-ի նիստին՝ չնայած պատշաճ ծանուցված լինելու հանգամանքին: 2013 թվականի նոյեմբերի 29-ի վերջնական նիստը տեսել է ընդամենը մի քանի րոպե, քանի որ գործի քննությունն արդեն ավարտվել էր 2013 թվականի նոյեմբերի 18-ի նիստի ժամանակ, եւ վերջին նիստի ընթացքում պետք է կայացվեր միայն վճիռը: Դիմումատուի պնդումներն այն մասին, որ իր մասնակցությունը միայն ձեռական բնույթ է կրել, ունի ենթադրական բնույթ, եւ նույնիսկ եթե ենթադրվի, որ դա այդպես է եղել, դա պետք է վերագրվի դիմումատուին եւ իր դիրքորոշումը ներկայացնելու նրա անկարողությանը, այլ ոչ թե դատարանների գործողություններում որեւէ թերության առկայությանը:

## 2. Դատարանի գնահատականը

107. Դատարանը կրկին նշում է, որ այն գործերում, որոնցում ներգրավված են հոգեկան հիվանդություն ունեցող անձինք, ներպետական դատարանները պետք է ունենան հայեցողական լիազորությունների որոշակի շրջանակ: Այսպես, օրինակ, նրանք կարող են ձեռնարկել համապատասխան դատավարական միջոցառումներ՝ արդարադատության պատշաճ իրականացումը, տվյալ անձի առողջության պաշտպանությունն ապահովելու նպատակով եւ այլն: Այնուամենայնիվ, այդ միջոցները չպետք է ազդեցություն ունենան դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածով երաշխավորված արդար դատաքննության իրավունքի բուն էության վրա: Գնահատելիս, թե արդյոք կոնկրետ միջոցը, ինչպես օրինակ՝ դիմումատուին դատական նիստին մասնակից չդարձնելը, անհրաժեշտ է եղել, թե՛ ոչ, Դատարանը հաշվի կառնի բոլոր վերաբերելի գործոնները (տե՛ս վերելում հիշատակված՝ Շտուկատուրովի գործը, § 68):

108. Այնուհետեւ Դատարանը կրկին նշում է, որ ապացույցների ընդունելիությունը հիմնականում ազգային օրենսդրությամբ կարգավորվող հարց է, եւ, որպես կանոն, ազգային դատարանները պետք է գնահատեն իրենց

ներկայացված ապացույցները (տե՛ս *Էլշոլզն ընդդեմ Գերմանիայի* [ՄՊ] [*Elsholz v. Germany* [GC]], թիվ 25735/94, § 66, ՄԻԵԴ 2000-VIII): Դատարանի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի առնչությամբ միակ խնդիրն է քննել այն գանգատները, որոնցով ներկայացվում է պնդում, որ ներպետական դատարանները չեն ապահովել այդ հոդվածով սահմանված հատուկ դատավարական երաշխիքները, կամ որ, ընդհանուր առմամբ, վարույթի իրականացման ընթացքում դիմումատուի համար չի երաշխավորվել արդար լսում (տե՛ս վերելում հիշատակված՝ *Սենտրոն Եվրոպա 7 Ս.Ն.Լ-ն եւ Դի Սպեֆանոն ընդդեմ Իտալիայի* գործը, § 197):

109. Սույն գործում Դատարանը համարում է, որ այն փաստը, որ գործը քննվել է հատուկ վարույթի միջոցով, որը չի ենթադրում վիճող կողմերի առկայություն, ինքնին բավարար չէ 6-րդ հոդվածի խախտում հայտնաբերելու համար, եւ անհրաժեշտ է ուսումնասիրել տվյալ վարույթի կոնկրետ հանգամանքները: Այս առնչությամբ Դատարանը նկատում է, որ իսկապես դիմումատուին ի սկզբանե չի թույլատրվել մասնակցել այն դատական նիստին, որի ընթացքում Վարչական շրջանի դատարանը որոշել է զրկել նրան գործունակությունից, քանի որ նա չի համարվել վարույթի կողմ (տե՛ս վերելում՝ 15-րդ պարբերությունը): Այնուամենայնիվ, այս թերությունը վերացվել է Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից, որը բեկանել է այդ վճիռը հենց այդ հիմքով եւ գործն ուղարկել է նոր քննության (տե՛ս վերելում՝ 20-րդ պարբերությունը): Գործի նոր քննության ընթացքում դիմումատուին տրվել է երրորդ անձի կարգավիճակ՝ նրան թույլատրելով օգտվել կողմի բոլոր հիմնական դատավարական իրավունքներից՝ ներառյալ ներկա գտնվելու, հայտարարություններ անելու, պահանջներ ներկայացնելու եւ որոշումները բողոքարկելու իրավունքները: Արդյունքում դիմումատուն հրավիրվել է մասնակցել է Վարչական շրջանի դատարանում տեղի ունեցած գրեթե բոլոր նիստերին (տե՛ս, որպես համեմատություն, վերելում հիշատակված՝ *Շարուկապուրովի* գործը, § 69, *X-ը եւ Y-ն ընդդեմ Խորվաթիայի* [*X and Y v. Croatia*], թիվ 5193/09, § 81, 2011 թվականի նոյեմբերի 3 եւ *Լաշինն ընդդեմ Ռուսաստանի* [*Lashin v. Russia*], թիվ 33117/02, § 82, 2013 թվականի հունվարի 22):

Ավելին, ի հակադրություն դիմումատուի բողոքի, գործի նյութերից հետետում է, որ նա փաստացի հայտարարություններ է կատարել Վարչական շրջանի դատարանում, եւ նրան հարցեր են ուղղվել գործը քննող դատավորի կողմից (տե՛ս վերետում՝ 24-րդ պարբերությունը): Հետետաբար Դատարանը չի կարող ընդունել դիմումատուի այն փաստարկը, որ դատական նիստին իր մասնակցությունը կրել է բացառապես ձեական բնույթ: Դատարանը նշում է, որ դիմումատուն չի ներկայացրել որեւէ այլ, ավելի կոնկրետ փաստարկ՝ ոչ արդար դատաքննության վերաբերյալ իր պնդումները հաստատելու համար: Այդպիսի հանգամանքներում դիմումատուի կողմից ձեակերպված՝ ոչ արդար դատաքննության եւ մրցակցային դատավարության բացակայության վերաբերյալ պնդումները բավարար չեն, որպետզի Դատարանը եզրակացնի, որ վարույթի իրականացման ընթացքում դիմումատուի համար ընդհանուր առմամբ չեն երաշխավորվել արդար լսումներ:

110. Այստեղից հետետում է, որ գանգատի այս մասն ակնհայտ անհիմն է եւ պետք է մերժվի՝ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ եւ 4-րդ կետերի համաձայն:

## II. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄԸ

111. Դիմումատուն բողոքել է, որ իրեն զրկել են գործունակությունից՝ խախտելով Կոնվենցիայի 8-րդ հոդվածով սահմանված երաշխիքները, որը շարադրված է հետետյալ բովանդակությամբ.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի եւ նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դետքերի, երբ դա նախատետված է օրենքով եւ անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպետ նաեւ անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների եւ ազատությունների պաշտպանության նպատակով»:



## **Ա. Ընդունելիությունը**

112. Կառավարությունը նշել է, որ ներպետական դատարաններում դիմումատուն չի բարձրացրել Ց-րդ հողվածով սահմանված իր իրավունքներին միջամտության համաչափության հարցը: Նա չի նշել, թե իր գործում միջամտության կոնկրետ որ տարրը չի հարգվել, եւ հետեւաբար չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցները:

113. Դիմումատուն Կառավարության առարկության վերաբերյալ մեկնաբանություններ չի ներկայացրել:

114. Դատարանը համարում է, որ Կառավարության առարկությունը սերտորեն կապված է դիմումատուի բողոքի էության հետ եւ, հետեւաբար, պետք է միացվի ըստ էության քննությանը:

## **Բ. Ըստ էության քննությունը**

### *1. Կողմերի փաստարկները*

115. Դիմումատուն նշել է, որ իրեն գործունակությունից ամբողջությամբ զրկելը եղել է ոչ համաչափ եւ ոչ համապատասխան միջոց: Այս հարցի վերաբերյալ որոշում կայացնելիս որեւէ հարմարեցված մոտեցում չի կիրառվել, քանի որ հոգեկան հիվանդություն ունեցող անձանց գործունակության սահմանափակման որեւէ միջանկյալ ձեւ օրենքով նախատեսված չի եղել, եւ միակ ընտրությունը եղել է կա՛մ ամբողջովին գործունակ թողնելը, կա՛մ ամբողջությամբ գործունակությունից զրկելը: Ավելին, տվյալ միջոցը կիրառվել է անորոշ ժամկետով՝ առանց վերանայման պահանջ ներկայացնելու հնարավորության՝ բացի իր խնամակալի միջոցով ներկայացնելուց, եւ հանգեցրել է իրավունքների, այդ թվում՝ իր կնոջ դեմ ներկայացված ամուսնալուծության եւ վտարման մասին հայցը շարունակելու կարողության լրիվ կորստի: Նրան գործունակությունից զրկելիս դատարանները հիմնվել են միայն հին բժշկական եզրակացության վրա,

որը հուսալի կերպով չէր արտացոլում նրա հոգեկան առողջությունը՝ տվյալ պահի դրությամբ: Բացի այդ, դրանում չի եղել որեւէ բացատրություն այն մասին, թե ինչպիսի գործողությունների դեպքում կարող էր նրա հիվանդությունն ազդել նրա հասկանալու կամ ղեկավարելու ունակության վրա: Դրանում չեն սահմանվել նաեւ նրա սոցիալական կյանքի, նյութական շահերի եւ այլնի վրա նրա հիվանդության հնարավոր հետեւանքները: Նրա կնոջ կողմից արված հայտարարությունները վստահելի չեն եղել, քանի որ նա շահագրգռված է եղել նրան գործունակությունից զրկելու հարցում՝ ամուսնալուծության եւ վտարման մասին հայցի քննությունը կանխելու նպատակով: Վերջում դիմումատուն պնդել է, որ իրեն գործունակությունից զրկելու մասին որոշումը որեւէ իրավաչափ նպատակ չի հետապնդել:

116. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի՝ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքներին միջամտությունը սահմանված է եղել օրենքով, մասնավորապես՝ ՔՕ-ի 31-րդ հոդվածով: Այն հետապնդել է իրավաչափ նպատակ, մասնավորապես՝ այլ անձանց իրավունքների, այդ թվում՝ նրա կնոջ կյանքի իրավունքի պաշտպանությունը, որին դիմումատուն սպառնացել էր հարվածել: Վերջապես միջամտությունը եղել է համաչափ, քանի որ այն հիմնված չի եղել միայն բժշկական եզրակացության վրա, այլ նաեւ նրա կնոջ եւ հարեւանների հայտարարությունների, ինչպես նաեւ այն դատավորի անձնական տպավորությունների վրա, որն անձամբ էր լսել դիմումատուին: Ավելին, դիմումատուն խնամակալի նշանակման հարցը դատարաններում վիճարկելու, ինչպես նաեւ Սահմանադրական դատարանի 2015 թվականի ապրիլի 7-ի որոշումից հետո իր գործունակությունը վերականգնելու համար պարբերաբար դատարան դիմելու իրավունք է ունեցել:

## 2. Դատարանի գնահատականը

117. Դատարանն ի սկզբանե նշում է, որ կողմերի միջեւ չի վիճարկվում այն հարցը, որ դիմումատուին գործունակությունից զրկելը համարվում է 8-րդ հոդվածով երաշխավորված մասնավոր կյանքի իրավունքին միջամտություն, եւ որեւէ պատճառ չի տեսնում այլ որոշում կայացնելու համար՝ հատկապես հաշվի առնելով դիմումատուի անձնական ինքնուրույնության նկատմամբ բազմաթիվ լուրջ սահմանափակումները, որոնք առաջացրել է այդ միջոցը (տե՛ս վերելում հիշատակված՝ Շտուկարտրովի գործը, § 83 եւ վերելում հիշատակված՝ Լաշինի գործը, § 77):

118. Դատարանը կրկին նշում է, որ անհատի՝ մասնավոր կյանքը հարգելու իրավունքին ցանկացած միջամտություն կհամարվի 8-րդ հոդվածի խախտում, բացառությամբ այն դեպքերի, երբ դա «նախատեսված է օրենքով», հետապնդել է իրավաչափ նպատակ կամ նպատակներ՝ համաձայն 2-րդ կետի, եւ «անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում» այն իմաստով, որ այն համաչափ է հետապնդվող նպատակներին:

119. Սույն գործում դիմումատուն չի պնդել, որ միջամտությունը չի եղել օրինական, իսկ Դատարանը նշում է, որ այն տեղի է ունեցել ՔՕ-ի 31-րդ հոդվածի հիման վրա: Ավելին, Դատարանն անհրաժեշտ չի համարում ուսումնասիրել այն հարցը, թե արդյոք միջամտությունը հետապնդել է իրավաչափ նպատակ, թե՛ ոչ, քանի որ դիմումատուին գործունակությունից զրկելու մասին որոշումն ամեն դեպքում անհամաչափ է եղել ցանկացած հետապնդվող իրավաչափ նպատակի՝ ներքելում նշված պատճառներով:

120. Դատարանը կրկին նշում է, որ, համաձայն 8-րդ հոդվածի, իշխանությունները պետք է հաստատեն արդար հավասարակշռություն հոգեկան հիվանդություն ունեցող անձի շահերի եւ մյուս շահագրգիռ անձանց իրավաչափ շահերի միջեւ: Այնուամենայնիվ, որպես կանոն, որեւէ անձի մտավոր կարողությունը որոշելու նման բարդ հարցի դեպքում իշխանությունները պետք է

ունենան հայեցողական լիազորությունների լայն շրջանակ: Սա հիմնականում բացատրվում է այն փաստով, որ ազգային մարմիններն ունեն շահագրգիռ անձանց հետ ուղղակիորեն շփվելու առավելություն եւ, հետեւաբար, հատկապես նման հարցերը որոշելու համար գտնվում են լավ դիրքում: Դատարանի խնդիրն է Կոնվենցիայի համաձայն վերանայել ազգային մարմինների կողմից այս մասով իրենց լիազորությունների իրականացմամբ կայացված որոշումները (տե՛ս վերելում հիշատակված՝ *Շփուկափուրովի* գործը, § 87):

121. Միեւնույն ժամանակ իրավասու ազգային մարմիններին տրվող հայեցողական լիազորությունների շրջանակը կտարբերվի՝ ըստ խնդիրների բնույթի եւ վտանգված շահերի կարեւորության (տե՛ս վերելում հիշատակված՝ *Էլշոլզի* գործը, § 49): Մասնավոր կյանքի ոլորտում շատ լուրջ սահմանափակումների համար անհրաժեշտ է ավելի խորն ուսումնասիրություն: Այս առնչությամբ Դատարանը հաշվի է առնում այն փաստը, որ որեւէ մեկին գործունակությունից զրկելն առաջացնում է ծանր հետեւանքներ այդ անձի կյանքի տարբեր ոլորտների համար (տե՛ս վերելում հիշատակված՝ *Շփուկափուրովի* գործը, § 88, վերելում հիշատակված՝ *X-ը եւ Y-ն ընդդեմ Խորվաթիայի* գործը, § 109 եւ վերելում հիշատակված՝ *Լաշինի* գործը, § 81):

122. Սույն գործում Դատարանը նկատում է, որ ի հակադրություն Կառավարության պնդման՝ դիմումատուին անգործունակ ճանաչելու մասին 2013 թվականի նոյեմբերի 29-ի վճիռը հիմնված է եղել միայն 2012 թվականի սեպտեմբերի 25-ի հոգեբուժական փորձագիտական եզրակացության վրա (տե՛ս վերելում՝ 25-րդ պարբերությունը): Դատարանը կասկածի տակ չի դնում դիմումատուին զննած բժիշկների ձեռնհասությունը եւ այդ եզրակացության արդյունքները: Այնուամենայնիվ, Դատարանը մի շարք գործերով եկել է այն եզրակացության, որ հոգեկան հիվանդության առկայությունը նույնիսկ լուրջ հիվանդության դեպքում, չի կարող լինել գործունակությունից ամբողջությամբ զրկելը հիմնավորելու միակ պատճառը: Ազատությունից զրկելու վերաբերյալ գործերի հետ անալոգիայով, գործունակությունից ամբողջությամբ զրկելը

հիմնավորելու համար, հոգեկան հիվանդությունը պետք է լինի այդ միջոցի համար հիմք համարվող որոշակի «տեսակի կամ աստիճանի» (տե՛ս վերելում հիշատակված՝ *Շտրուկարտրովի* գործը, § 94 եւ վերելում հիշատակված՝ *Լաշինի* գործը, § 90): Ինչպես *Շտրուկարտրովի*, այնպես էլ *Լաշինի* գործերում, Դատարանը գտել է, որ ներպետական վարույթում դիմումատուի հոգեկան հիվանդության «տեսակի եւ աստիճանի» հարցը մնացել է չլուծված, քանի որ Ռուսաստանի օրենսդրությամբ նախատեսված չէր հոգեկան հիվանդություն ունեցող անձանց գործունակության սահմանափակման որեւէ միջանկյալ ձեւ, եւ դրանով կատարված էր տարբերակում միայն ամբողջությամբ գործունակի եւ ամբողջությամբ անգործունակի միջեւ:

123. Սույն գործում Դատարանը բախվում է վերոնշյալ գործերում առկա՝ ըստ էության նույն իրավիճակին: Նույն ձեւով Հայաստանի օրենսդրությամբ նախատեսված չէին այնպիսի իրավիճակներին սահմանային կամ հարմարեցված լուծում տալու տարբերակներ, ինչպես դիմումատուի դեպքում է, եւ դրանով տարբերակում էր կատարված միայն ամբողջությամբ գործունակի եւ ամբողջությամբ անգործունակի միջեւ: Ուստի դատավորի կողմից ձեւակերպված՝ բժիշկներին ուղղված հարցերը նույն ձեւով չեն վերաբերել դիմումատուի հոգեկան հիվանդության «տեսակին եւ աստիճանին»: Արդյունքում 2012 թվականի սեպտեմբերի 25-ի հոգեբուժական փորձագիտական եզրակացության մեջ անհրաժեշտ մանրամասնությամբ չի վերլուծվել դիմումատուի անգործունակության աստիճանը: Այնտեղ նշվել է դիմումատուի չափազանց կասկածամիտ լինելու եւ ժամանակ առ ժամանակ ագրեսիվ վարքագծի, կցկտուր մտքերի եւ կոնֆլիկտի մեջ մտնելու հակվածության մասին եւ եզրակացություն է կատարվել, որ դիմումատուն ունի զառանցական խանգարում եւ, հետեւաբար, չի կարող հասկանալ իր գործողությունները եւ ղեկավարել դրանք: Միեւնույն ժամանակ եզրակացության մեջ չի բացատրվել, թե որ գործողությունները չի կարող դիմումատուն հասկանալ կամ ղեկավարել: Դիմումատուի հիվանդության աստիճանը հստակ չէ, ինչպես նաեւ հստակ չեն նրա սոցիալական

կյանքի, առողջության, նյութական շահերի եւ այլնի վրա նրա հիվանդության հնարավոր հետեւանքները: 2012 թվականի սեպտեմբերի 25-ի եզրակացությունն այս մասով բավարար հստակ չի եղել: Դրանում չի եղել նաեւ որեւէ պնդում դիմումատուի կողմից իրեն վնասելու կամ այլ կոպիտ անպատասխանատու վարքագծի մասին կամ այն մասին, որ նա մասամբ կամ ընդհանրապես չի կարող հոգ տանել իր մասին (տե՛ս, *mutatis mutandis*, վերելում հիշատակված՝ *Շիրուկարուրովի* գործը, §§ 93-94 եւ վերելում հիշատակված՝ *Լաշինի* գործը, §§ 90-91): Այդուհանդերձ, ենթադրելով, որ դիմումատուի վիճակը պահանջել է նրա նկատմամբ պաշտպանության որեւէ տեսակի միջոց, Դատարանը նշում է, որ, ինչպես արդեն վերելում նշվել է, ներպետական դատարանը չի ունեցել այլ ընտրություն, քան ամբողջական անգործունակության կիրառումն ու դրա պահպանումն է. ամենախիստ միջոցը, ինչը նշանակում է ինքնուրույնության լրիվ կորուստ կյանքի գրեթե բոլոր ոլորտներում (տե՛ս, որպես համեմատություն, *Ա.Մ.Վ.-ն ընդդեմ Ֆինլանդիայի* [*A.-M.V. v. Finland*], թիվ 53251/13, §§ 89-90, 2017 թվականի մարտի 23):

124. Դատարանը նաեւ համապատասխան հոգեբուժական փորձագիտական եզրակացության մասով վերահաստատում է, որ բժշկական փորձաքննության օբյեկտիվությունը ենթադրում է պահանջ, որ այն պետք է լինի հնարավորինս վերջերս կատարված, ընդ որում այն հարցը, թե արդյոք բժշկական փորձաքննությունը հնարավորինս վերջերս է կատարվել, թե՛ ոչ, կախված է գործի կոնկրետ հանգամանքներից (տե՛ս *Իլնսեհերն ընդդեմ Գերմանիայի* [GC] [*Ilseher v. Germany* [GC]], թիվ 10211/12 եւ 27505/14, § 131, 2018 թվականի դեկտեմբերի 4): Սույն գործում Դատարանը նշում է, որ հոգեբուժական փորձագիտական եզրակացությունը տրվել է 2012 թվականի սեպտեմբերի 25-ին, այսինքն՝ Վարչական շրջանի դատարանի՝ դիմումատուին անգործունակ ճանաչելու մասին վճռից ավելի քան տասնչորս ամիս առաջ եւ Վերաքննիչ քաղաքացիական դատարանի՝ այդ վճիռն անփոփոխ թողնելու մասին որոշումից գրեթե մեկուկես տարի առաջ: Ըստ Դատարանի տեսակետի՝ այդ եզրակացությունը, վերոնշյալ՝

Նախարարների կոմիտեի թիվ R(99) 4 հանձնարարականի 12-րդ սկզբունքի իմաստով, չի կարող համարվել «արդիական» (տե՛ս, *mutatis mutandis*, Հ.Ֆ.-ն ընդդեմ Սլովակիայի [*H.F. v. Slovakia*], թիվ 54797/00, § 41, 2005 թվականի նոյեմբերի 8): Ավելին, դիմումատուն առաջին անգամ է ենթարկվել հոգեբուժական փորձաքննության, քանի որ նա չի ունեցել հոգեկան հիվանդության որեւէ պատմություն, եւ գործի նյութերում որեւէ բան չի ենթադրում, որ դիմումատուի վիճակը հնարավոր չի եղել փոխել: Դատարանը համարում է, որ այդ հանգամանքներում ներպետական դատարանները պետք է պահանջած լինեին դիմումատուի վիճակի՝ որեւէ տեսակի նոր գնահատում (տե՛ս, *mutatis mutandis*, վերելում հիշատակված՝ *Լաշինի* գործը, §§ 83-84): Վարչական շրջանի դատարանը, սակայն, հիմնվել է միայն այդ եզրակացության վրա՝ առանց կասկածելու, թե արդյոք տվյալ պահի դրությամբ այն ճշգրտորեն արտացոլել է դիմումատուի հոգեկան առողջության վիճակը, իսկ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն անդրադարձել է այնպիսի ապացույցների բացակայությանը, որոնցով կհերքվեին այդ եզրակացության մեջ առկա եզրահանգումները կամ կենթադրվեր, որ դիմումատուն առողջացել է՝ չնայած այն փաստին, որ ներպետական դատարանների պարտականությունն է եղել պահանջել այդպիսի ապացույցներ եւ, անհրաժեշտության դեպքում, նշանակել նոր բժշկական զննություն:

125. Հաշվի առնելով վերոնշյալը՝ Դատարանը եզրակացնում է, որ դիմումատուի նկատմամբ կիրառված միջոցը եղել է հետապնդված իրավաչափ նպատակին ոչ համաչափ: Արդյունքում դիմումատուի՝ 8-րդ հոդվածով սահմանված իրավունքները սահմանափակվել են ավելի խիստ ձեւով, քան անհրաժեշտ է եղել:

126. Հանգելով այս եզրակացությանը՝ Դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Կառավարության առարկությանը: Նախեստառաջ՝ այն նշում է, որ չնայած ներպետական դատարաններում արված իր

հայտարարություններում դիմումատուն կոնկրետ չի նշել «համաչափություն» բառը՝ նա, ըստ էության, բարձրացրել է միջամտության անհամաչափ բնույթի հետ կապված հարցը: Երկրորդ՝ Դատարանը նշում է, որ դիմումատուին ամբողջությամբ գործունակությունից զրկելը (միջոց, որը Դատարանի կողմից, գործի տվյալ հանգամանքներում, համարվել է ոչ համաչափ), ինչպես արդեն նշվել է վերելում, եղել է միակ միջոցը, որը ներպետական դատարանը, ներպետական օրենսդրության համաձայն, իրավասու էր կիրառել հոգեկան հիվանդություն ունեցող անձանց գործունակության սահմանափակման որելէ միջանկյալ ձեւի բացակայության պարագայում: Այլ կերպ ասած, գործունակության սահմանափակում պահանջող դեպքերում ներպետական դատարանը հենց ներպետական օրենսդրությամբ է զրկված եղել կիրառելի միջոցի համաչափությունը գնահատելու հնարավորությունից: Հետեւաբար կասկածելի է, թե արդյոք այդ հարցի բարձրացումը, բացահայտ ձեւով կամ ըստ էության, ունեցել է կամ կարող էր ունենալ հաջողության հասնելու որելէ հեռանկար: Որպես եզրակացություն Դատարանը համարում է, որ դիմումատուն սպառել է իրավական պաշտպանության ներպետական միջոցները, եւ մերժում է Կառավարության առարկությունը:

127. Հետեւաբար տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում:

### III. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

128. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի համաձայն՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:



**Ա. Վնասը**

129. Դիմումատուն պահանջել է 10 000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

130. Կառավարությունը նշել է, որ դիմումատուի պահանջած գումարը չափազանց մեծ է եւ պետք է նվազեցվի, եթե Դատարանը գտնի դիմումատուի իրավունքների որեւէ խախտում:

131. Դատարանը համարում է, որ դիմումատուն անկասկած կրել է ոչ նյութական վնաս: Դատարանը, կատարելով իր գնահատումն արդարության սկզբունքի հիման վրա, դիմումատուին շնորհում է 7 800 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի հատուցում:

**Բ. Ծախսերը եւ ծախքերը**

132. Դիմումատուն պահանջել է 3 900 եվրո՝ որպես Դատարանում իրեն ներկայացնելու համար կրած ծախսերի եւ ծախքերի փոխհատուցում, որը ներառում է մեկ ժամի համար 50 եվրո դրույքաչափով կատարված 76 ժամյա իրավաբանական ծառայություններ:

133. Կառավարությունը նշել է, որ դիմումատուն չի ներկայացրել իր ներկայացուցիչների հետ կնքված պայմանագիր՝ որպես ծախսերին եւ ծախքերին առնչվող պահանջի հիմք: Հետեւաբար նրանք պնդել են, որ պահանջը հիմնավորված չէ:

134. Դատարանի նախադեպային իրավունքի համաձայն՝ դիմումատուն ունի ծախսերի ու ծախքերի հատուցման իրավունք այնքանով, որքանով ապացուցվել է, որ դրանք իրականում կատարվել են, անհրաժեշտ են եղել, եւ որ դրանց չափը եղել է ողջամիտ: Պահանջը հիմնավորող որեւէ փաստաթղթի բացակայության պարագայում Դատարանը որոշում է մերժել դիմումատուի՝ ծախսերի եւ ծախքերի մասով պահանջը:

#### Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը

135. Դատարանը գտնում է, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնված լինի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:

#### ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱՁԱՅՆ՝

1. Որոշում է իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու մասին Կառավարության առարկությունը միացնել գործի ըստ էության քննությանը եւ մերժում է այն.

2. Հայտարարում է դիմումատուի՝ 6-րդ հոդվածով սահմանված դատարանի մատչելիության իրավունքի եւ 8-րդ հոդվածով սահմանված մասնավոր կյանքը հարգելու իրավունքի վերաբերյալ բողոքներն ընդունելի, իսկ գանգատը մնացած մասով՝ անընդունելի.

3. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում՝ դիմումատուի՝ դատարանի մատչելիության իրավունքի առնչությամբ, ինչպես ամուսնալուծության եւ վտարման գործով վարույթն ավարտելու, այնպես էլ դիմումատուի կողմից գործունակության վերականգնումը պահանջելու անհնարինության մասով.

4. Վճռում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 8-րդ հոդվածի խախտում՝ դիմումատուին գործունակությունից զրկելու առնչությամբ.

5. Վճռում է, որ՝

ա) պատասխանող պետությունը վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալու օրվանից երեք ամսվա ընթացքում պետք է դիմումատուին ոչ նյութական վնասի դիմաց վճարի 7 800 եվրո (յոթ հազար ութ հարյուր եվրո)՝ գումարած գանձման

ենթակա ցանկացած հարկ, որը պետք է փոխարկվի պատասխանող պետության արժույթով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.

բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո՝ մինչև վճարման օրը, պետք է հաշվարկվի վերոնշյալ գումարների նկատմամբ պարզ տոկոսադրույք՝ չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած՝ լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.

6. *Մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով եւ գրավոր ծանուցվել է 2019 թվականի հոկտեմբերի 3-ին՝ համաձայն Դատարանի կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ եւ 3-րդ կետերի:

Աբել Կամպոս

Քսենյա Տուրկովիչ

Քարտուղար

Նախագահ